

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

Կողմից եւ ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՂՈՒՔ ԼՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵԱՆ ԸՍՑԱՏԱՌ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ  
ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱԶԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԽՍԱՆԱԼ "ԸՄՄԱԸԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

[www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՇՆՈՐԸԱԿԱԼ ԵՆՔ ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:  
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԸՆԴՆԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԵՐ ՄԵՁ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԻՍԻՏՐ Ա. ՍՊԻՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՍՈՒԼԹԱՆ  
ԱԲԴՈՒԼ ՀԱՍԻԴԸ

ԵՐԵՎԱՆ 2000

**ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ  
ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ՍԱՏԵՆԱՇԱՐ**

**ԹԻՎ 8**

**Գիմիտր Ա. Սպիրով, Հայաստանը և սուլթան  
Աբդուլ Համիդը (գիրք առաջին)**

**Խմբագիր Լ. Ա. Բարսեղյան**

**Թարգմանությունը քուլդարեբենից,  
(գրքի առաջին հրատարակությունից, Սոֆիա, 1897),  
առաջաբանը և ծանոթագրությունները  
Կ. Չ. Ճինգոզյանի**

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Սույն գիրքը պատկանում է բուլղար պատճառան, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Դիմիտր Ա. Սպիրովի գրչին: Սա նույն վերնագրով, նույն հեղինակի Բուլղարիայում լույս տեսած գրքի առաջին հրատարակությունն է: Երկրորդ՝ «Ճըզգըրտված ու լրացված» հրատարակությունը, մեր իսկ թարգմանությամբ և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատարակությամբ լույս է տեսել 1997 թվականին՝ «Հայերի սարսափելի կոտորածները» վերնագրի տակ:

Ներկա գրքույկը նույնպես վերաբերում է 1894-1896 թվականների հայկական կոտորածներին, սակայն, այլ բովանդակությամբ: Այստեղ հեղինակն անդրադառնում է Կ. Պոլսի և Արևմտյան Հայաստանի մի շարք հայկական բնակավայրերում սուլթան Աբդուլ Համիդի «սրբազան օրհնությամբ» սանձազերծված կոտորածներին:

Գրքում տեղ է գտել հայոց ցեղասպանության առթիվ մեծ տերությունների դեսպանների սուլթանին ուղղված համատեղ նոտան, որտեղ բացահայտվում է սուլթանի հանցագործությունը, առանց որևէ պատճառաբանության թուրքիայում ապրող հայերին մասսայաբար կոտորելու նախաձեռնությունը:

Սույն գրքում մեջբերված են Հայ հեղափոխական դաշնակցության «Դրոշակ» թերթում և նույն կուսակցության կենտրոնական ղեկավարության գործադիր կոմիտեի անունից հրապարակված հայտարարությունները, որտեղ մերկացվում է սուլթանի վարած հայահալած քաղաքականությունը, խրախուսվում է ֆիդայական շարժումը, և ժողովրդին կոչ է արվում խտացնել շարժման շարքերը, շարունակելու համար զինված պայքարը օսմանյան դարավոր լծից Արևմըտյան Հայաստանը ազատագրելու համար:

Գրքում բերված են քաղվածքներ ժամանակի գերմանական, ֆրանսիական, սերբական և այլ օտարերկրյա բերթերում տպագրված ականատես բղթակիցների վկայությունները՝ 4. Պոլսում և օսմանյան կայսրության մի շարք հայաբնակ վայրերում սուլթանի հրամանով իրագործվող խժոժությունների և սպանությունների մասին:

7. Սպիրոփի գրքում առավել հանգամանորեն խոսվում է Ուրֆայի հայերի հերոսամարտի և դրան հաջորդող համատարած կոտորածների հետ աղերսվող դեպքերի մասին: Բուլղար հեղինակը հակիրճորեն անդրադառնում է նաև Բիրեջիկում, Այնթապում և այլ հայաշատ վայրերում տեղի ունեցող ողբերգական իրադարձություններին: Այս տեղեկությունները հեղինակը քաղել է այդ տազնապալի օրերին Ուրֆայում և նշված ու չնշված քաղաքներում գտնվող ոմն ֆրանսիացի առևտրական-ճանապարհորդի «Կոտորածներ Հայաստանում» գրքից: Երևի հանգամանքների բերումով հեղինակի անունը չի նշված:

Գրքի «Հավելված» բաժնում առանձին ուշադրություն է նվիրված Մակեդոնիայում ապրող բուլղարների նկատմամբ թուրքերի գործած վայրագություններին և սպանություններին, որոնք զուգորդվում են Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող թալանին ու ոճրագործությունների հետ:

Հեղինակը բացահայտորեն դատապարտում է միջազգային, մասնավորապես ռուսական, թուրքական և բուլղարական դիվանագիտությունը, որը հորդորում է Մակեդոնիայում ապրող բուլղարներին «հանգիստ մնալ», որպեսզի օրերից մի օր բարվոք, բախտավոր կյանքով ապրելու սին պատրանքներով, չնայած, հավաստում է հեղինակը, սուլթան Աբդուլ Համիդը, «ուզում է Մակեդոնիայից երկրորդ Հայաստան ստեղծել»:

Գիրքն ավարտվում է թուրքերի մեջ արմատած հոռի վարքուբարքի մասին բուլղար ժողովրդի մեջ

լայն տարածում գտած դիպուկ ասույթներով:

Սպիրովի գրքի բուլղարերեն հրատարակությունը կրում է «Բուլղարական և թուրքական կառավարություններից բանադրված գրքույկ, ... որը վրդովեց մեծ չալմայակրի հանգիստը» և «Հայերի սարսափելի կոտորածները» ենթավերնագրերը:

Հայտնի է, որ Սպիրովը իր այս գրքի հակասութանական ուղղվածության համար դատապարտվել է վեցամսյա բանտարկության:

Դիմիտր Սպիրովի «Հայաստանը և սուլթան Աբդուլ Համիդը» գիրքը սոր, հետաքրքիր, վկայություններով հարստացնում է 1894-1896 թվականների Արևմտյան Հայաստանում և Կ. Պոլսում թուրքերի կազմակերպած հայկական առաջին եղեռնի պատմությունը:

*Կարո Ճինգոզյան*

## ՀԱՅԵՐԸ ԵՎ ՍՈՒՆԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՍԻՂԸ

*«Ես ուղղակի պալատից իմացա, որ սուլթանը հարբած է ուրախությունից՝ հայերի կոտորածից, և հոխորտում է, որ իր ժողովուրդը, իբր, հայերին հաղթել է միայն մահակներով»:*

Գերմանական «Վոսսիշե Ցալտունգ» թերթից

Որ Կոստանդնուպոլսի սատրապ Աբդուլ-Համիդ II-ը, ինքն է հրամայել հայերի կոտորածը, այդ մասին այլևս ոչ մի կասկած չկա: Նա է ուղղակի, արյունարբու, օթհատապաշտ և, այսպես ասած, ֆիզիկական մարդասպանը, 19-րդ դարի բռնակալների այս լուսատուն, այս երկրորդ Ներոնն է հրամայել կոտորածները, իր գլխավոր քարտուղար Սուրեյյա փաշայի միջոցով, որին հետո թունավորեց ընթրիքի ժամանակ<sup>1</sup>, որպեսզի կենդանի վկայի հետքը չմնա, որպեսզի Եվրոպայի նոջև ոչ ոք չտեսնի չկարողաման մատնել սուլթանին: Սա վկաներին վերացնելու արևելյան ձև է, որը սովորաբար գործի է դրվում թուրք բռնակալների կողմից: Բոսֆորի մեծ չալմայակիրը ուզեց աշխարհի երեսից սրբել այս ժողովրդին, քանզի շատ գլխացավանք և ծանր, անքուն գիշերներ է պատճառել նրան: Բայց ի հեճուկս այս թշվառականին, նրա ծրագիրը չկարողացավ լրիվ իրագործվել, որպեսզի ամբողջ ժողովրդին սրի քաշի: Սակայն այն, ինչ կարողացավ անել այս անպաշտպան ազգին, բավական էր արժանանալու

<sup>1</sup> Այս իրողությունը համապատասխան փաստաթղթերով հաստատում է Լոնդոնում հրատարակվող «Ֆուրիեթ» («Ազատություն») թուրքական թերթը, իբր երիտթուրքերի կուսակցության օրգանը, որի գլխավորները այժմ սուլթանի Յըլդըզ Քյոչկի պալատում իրենց չիրուխն են ծխում: Թուրք և կուսակցություն, թուրք և ազատություն...



դափնե պսակի, ստանալու համար մարգարե Մուհամեդի օրհնությունը՝ ուղղակի եղեմ մտնելու՝ հավերժական երանությունը վայելելու համար: Ոոովհետև յուրաքանչյուր սուլթանի, Մուհամեդի ամեն մի ժառանգորդի, ամեն մի խալիֆի գեոարդյան պաշտամունքն է քրիստոնյաներին կոտորելը, անհավատ շատրն՝ գլավորներին սպանելն ու ոչնչացնելը: Քրիստոնյաներին ջարդելը ~~եանմարվում է իսլամի հավատի գլխավոր պատգամը, թուրքական սուլթանների և թուրք պետական այրերի նպատակադրված վարչական ունակությունների չափանիշը: Կոտորածները թուրքերի մեջ գոյություն ունի Գալիպոլիի մոտ՝ Եվրոպայի ամբողջորած օրից: Կոտորածը մի տերմին է, որը երբեք դուրս չի գալիս սուլթանների բառարանից, քանզի մտնում է Մուհամեդի ալգուրանի պատգամների մեջ, որի սկզբում է «Ուղղափառների Աստուծոց բացի ուրիշ Աստված չկա»:~~ Կոտորած և ոչնչացում անհավատ կյաֆիրների<sup>1</sup>: որոնք արգելքներ էին հարուցում իսլամի հավատի առջև, և որոնք չեն հավատում ճշմարիտ մարգարե Մուհամեդին: Թուրքերի գավթողական պատերազմները աչքի են ընկնում անբողջ մարգերի դաժան և գլխովին կոտորածներով: Այս կոտորածներն ու ջարդերը պարբերաբար կիրառում են մինչև օրս: Դա տեղի է ունենում այսօր ևս՝ հայերի նկատմամբ, որոնք 5-6 տարի է ինչ, խալիֆի բարձր հովանավորությամբ պարբերաբար ոչնչացվում են որպես կատաղած կովեր՝ քաղաքների փողոցներում, նույնիսկ Ստամբուլում, այս միկրոֆի հանգստավայրի առջև, որը խմել է, և դեռ խմելու է այնքան մարդկային արյուն:

~~Թուրքերի պատմությունը, սկզբից մինչև օրս, կեղտոտ այլանդակությունների, և պատմության մեջ անօրինակ կոտորածների մի շղթա է: Եվ այդպիսին է լինելու մինչև վերջ, քանի որ կրի երեսին գոյություն ունի թուրքական իշխանություն և թուրքական պետու-~~

<sup>1</sup> Կյաֆիր - ապատամբ, ըմբոստ:

թիւն, այսինքն մինչև այս հաստագլուխ ենիչերական պետութեան լրիվ քայքայումը:

\*  
\* \* \*

Հիմա ամեն ինչ ապացուցված է և պարզորոշ կերպով լուսարանված, որ Կ. Պոլսում, ինչպես և Հայաստանում, և առհասարակ, թուրքական կայսրութեան այն վայրերում, որտեղ հայեր են ապրում, անցյալ և նախանցյալ տարի տեղի ունեցած կոտորածները, թուրքական հայտնի մոլեռանդութեան բռնկման հետևանքները և գործը չէին, այլ սրբութեամբ հրամայված, կազմակերպված և դեռ շատ վաղուց նախապատրաստված նույն ինքը «մեծ չալմայակրից» և «մեծ մարդասպանից», իսկ գործի էր դրված պալատական մանկլավիկ, փաղիշահի սիրելի Սուրեյա փաշայի կողմից: Այս մասին այնքան փաստեր կան և այնքան շատ է գրված, որ հազիվ թե կասկածի տեղիք տա: Եվ թող հայտնի լինի մի քանի փաստեր Ռիլա<sup>1</sup> լեռան այն կողմում ապրող մեր հայրենակիցներին, թե ինչպիսի պետութեան արյունոտ ծեռքում է գտնվում իրենց թշվառ ճակատագիրը, նրանց կյանքը, ինչքն ու պատիվը: Այս պարագային ամենից հետաքրքիր փաստաթուղթը եվրոպական մեծ տերությունների համատեղ նոտան է, որն ուղղված է պայծառափայլ Բարձրագույն Դռանը՝ 1896 թվականի օգոստոսին, շնական Կոստանդնուպոլսում գլխավոր կոտորածները սկսվելուց հետո: Մեծ ուժերի դեսպանները մեկ անգամ ևս հայտարարեցին, որ Դուռը, որը թուրքական օրենքների համաձայն ունի 99 կոչումներ, որ կոտորածները կազմակերպված են եղել, որ մոլեռանդ անբոխը, բաղկացած ամեն տեսակի հիմարներից ու մանաֆներից<sup>2</sup>, որոնք Կ. Պոլսի փողոց-

<sup>1</sup> Ռիլա - սահմանամերձ լեռ Սրևմոյան Բուլղարիայի և Սակեդոնիայի միջև:

<sup>2</sup> Մանաֆ - Անատոլիայի թուրքերի արհամարհական հորթորջումը:

ներում սպանում էին հայերին, եղել են խիստ հրամանի տակ և գործել են խիստ որոշակի ձևով ու ծրագրով:

Դեսպանների ուղերձում դրա ապացույցները հանգում են հետևյալ ութ կետերի.

1. Կոստանդնուպոլսի ամբողջ տականքը, բոլոր բաշիբոզուկները<sup>1</sup> զինված են եղել համանման երկաթե մահակներով և կեռ երկաթներով, որոնցից 4. Պոլսի Բերայի վարչությունը բաժանում էր գիշերային պահապաններին ու պահակներին:

2. Կոտորածները սկսվել են միաժամանակ, համարյա միևնույն ժամին՝ 4. Պոլսի բոլոր թաղերում և արվարձաններում, որտեղ ապրում են հայեր: Բացի այդ, կոտորածները սկիզբ են առել նախքան հայ հեղափոխականների Օտոմանյան բանկ մտնելը:

3. Կոտորածները սկսվելուց առաջ, բոլոր մրգկիթներում տեղի են ունեցել կրոնական արարողություններ, որտեղ հանդիմավոր կերպով օրհնվել են կոտորածները:

4. Ջարդերի սկիզբն ու վերջը սկսվել ու դադարեցվել է հանկարծակի, միաժամանակ, որից պարզվում է, որ այդ բոլորը կատարվել է հրամանով:

5. Բանակի սպաներն ու ժանդարմների հրամանատարությունը որոշ լիազորված դեսպանների և պաշտոնյաների առջև միանշանակ հայտարարեցին, որ իրենք հրաման են ստացել միջամտելու և դադարեցնելու կոտորածները հազիվ 18-ին, այսինքն կոտորածների չորրորդ օրը, որը նշանակում է, որ կառավարությունը, ավելի ճիշտ մեծ մարդասպանը՝ սուլթանը, ոչ մի հրաման չի արձակել զինվորների և ժանդարմներին միջամտելու, և այս կառավարական անտարբերությունը ամենավճռորոշ միջոցն էր զինվորներին, մահակավորներին և բաշիբոզուկներին խրախուսելու, կոտորելու համար հայ գյավուրներին:

6. Երկու թուրքեր, որոնք երկար ժամանակ ծա-

---

<sup>1</sup> Բաշիբոզուկ - անկանոն զորք:

ռայել են մի եվրոպացի բանկիրի մոտ, երդմամբ խոստովանել են ֆրանսիական և անգլիական դեսպանների առաջ, թե մինչև կոտորածների սկսվելը, կանչվել են մի ոստիկանական տեղամաս, ուր ոմն Ադիլ չաուշի միջոցով առաջարկվել է նրանց, որ իսլամի հավատի համար մասնակցեն կոտորածներին: Հետագայում այս երկու թուրքերը անհայտացել են, հայտնի չէ թե ուր, և կամ ուղարկվել են Սուհամեդի մոտ՝ երկրապագելու:

7. Մահակներով զինվորները, բաշիբոզուկները և ամեն տեսակի տականքները, մի խոսքով Կ. Պոլսի բոլոր սանկյուլտները, կոտորել, ջարդել, սպանել ու հալածել են միայն հայերին և ոչ թե ուրիշ քրիստոնյաներին և կամ եվրոպացիներին (գուցե միայն սխալմամբ, Քասըմ փաշայի թաղամասում մորթվել են 3-4 հույն և մեկ բուլղար պարտիզպան): Ուրիշ քրիստոնյաներին չհալածելը, մեկ անգամ ևս ամենաորոշակի կերպով ապացուցում է, որ այս կոտորածներն թուրքական տարերային ֆանատիզմի արդյունք չէին, այլ ապես թուրքերը *իրենց հավատի համար* կկոտորեին բոլոր քրիստոնյաներին, ինչպես որ նման դեպքերում հորդորում է նրանց կրոնական հավատամքը, այլ կոտորածները նախապատրաստված և կազմակերպված են եղել վերևից, մեծ, գերագույն առաջնորդից, մուսուլմանների փառապանծ փառիշահի կողմից:

8. Սուլթանին ուղղված դեսպանների հետևողական դիմումներից հետո կոտորածները Կ.Պոլսի բոլոր փողոցներում և արվարձաններում հանկարծակի դադարել են: Հետևաբար, եթե կոտորածները թուրք բթամիտ և մոլեռանդ զանգվածների գործն էր, դրանք մի հրամանով կարելի էր միանգամից դադարեցնել և ամբոխին զրկել իրենց հաճելի զբաղմունքից՝ թալանելուց ու կոտորելուց:

Մեծ տերությունների դեսպանների դիմումը, որպեսզի անհապաղ դադարեցվեն կոտորածները, չնայած վերամբարձ է, այնուամենայնիվ ազդել է թագադրված մարդասպանի վրա:

Այս վերաբերմունքը հանգում է հետևյալ կարծառոտ ու լակոնական հեռագրին.

«Լ. Բ. Վ. Սուլբանին, Յըլդըզ Զյոշկ: Ցավում ենք այստեղ կատարվող դեպքերի համար: Դրանք պետք է անհապաղ դադարեցվեն, այլապես վնասելու են Թուրքիային և ձեր դինաստիային»:

Պետք է հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ կոտորածները սկսվելուց մի քանի ժամ առաջ մուսուլմանական թաղամասերում, որտեղ վխտում են սոֆտաներն<sup>1</sup> ու մուլլաները<sup>2</sup>, փակցված են եղել ամենից վայրագ, մոլեռանդ բովանդակությամբ կրոնական հայտարարություններ, և որոնց միջոցով քարոզվում է իսլամի հավատը, քանի որ գլավուրական երկրներից՝ Անգլիայից, Շվեյցարիայից, Ֆրանսիայից և Հունաստանից եկած հայ անարխիստները, որոնք ցանկանում են փաղիշահի կառավարության դեմ ցույցեր կազմակերպել, դրա հետ միասին մորթել մուսուլմաններին, թուրք բնակչությունը պարտավոր է, որ զգոն և պատրաստ լինի, օրենքի հիման վրա, դիմելու ինքնապաշտպանության, որպեսզի կոտորի հայ շներին: Եվ իրավամբ, ծայրահեղորեն թուրքական կրոնական ֆանատիզմով ներթափանցված հայտարարությունների շնորհիվ, թուրք բնակչությունը հիանալիորեն, այն էլ տոկոսներով, կատարել է իրեն հանձնարարված խընդիրը:

Այս յուրօրինակ փաստերը հստակ ցույց են տալիս սուլթանի չարամիտ ոգին, որ Կ.Պոլսի, ինչպես նաև Հայաստանի մյուս քաղաքների սպանդի նախաձեռնողը հենց ինքն է, ըստ Գլադստոնի՝ մեծ մարդասպանը: Եվ այս փաթեթավոր, չալմայակիր գազանը, բարբուղիմեռոսյան կոտորածներով հասել է իր ծրագրած նպատակներին, ոչնչացնելով հայերի մեծ մասին, որը եթե ոչ ուրիշ բանով, գոնե հոգեպես օգնել են գոր-

<sup>1</sup> Սոֆտա - իսլամական հոգևոր դպրոցի սան:

<sup>2</sup> Մուլլա - մուսուլման դատավոր:

ծին: Ձեռք բերվեց նաև հայերի չնչին վրեժխնդրությունը, որն այնքան դիվանագիտական դժվարություններ հարուցեց իրեն, և որը հաճախ թույլատրվեց հրապուրիչ հարեմականների սենյակներում ընպելու իր բուրումնալից սուրճը և ծխելու իր բյուրեղապակյա նարգիլեն: Հետո, Մուհամետի այս սերնդակիցը, ուզեցել է ցույց տալ «գյավուրական եվրոպային», որ այն ինչը անդադար պնդել է ինքը, որ թուրքիայում բարենորոգումներ անելը անհնարին է, որ նման բարեփոխումները միշտ էլ հանդիպելու են հավատացյալ իսլամի, ուղղափառ թուրքերի արյունալի բողոքներին: Այո՛: Եվ ժամանակավորապես, գուցե և այդպես է մտածում հանցագործությունների մեջ խրված պայծառափայլ փաղիշահը, որպեսզի ասիական կերպով և յուրովի լուծի հայկական հարցը, ոչնչացնելով հայերի ավելի կրթված մասը, վախեցնելու համար հայերին, իսկ մի մասին տեղահանի Ստամբուլից: Սակայն սրանք ժամանակավոր գործեր են, որոնք կարող են ուրախացնել միայն Կ.Պոլսի չալմայակիրներին:

\*  
\* \* \*

Եվ թող որ հիմա մի քանի էջով հետևենք Կոստանդնուպոլսի սպանդանոցների պատմությանը, ականատեսների և թղթակիցների տպավորություններին: Առաջին հայացքից այս պատմական էջերը աղուտ են, բայց թե միևնույն ժամանակ արտահայտում են շատ դեպքերի մասին: Դրանք արտացոլում են երանելի փաղիշահի ամբողջ հոգին, դրանք պատկերում են նրա ամբողջ ներքին աշխարհը:

Գերմանական «Վոսսիշե ցայտունգ» թերթի թղթակիցն ասում է. «Ես իմացա ուղղակի պալատից, որ սուլթանը հարբած է ուրախությունից՝ կոտորածների հաջողության առթիվ և հոխորտում է, որ իր ժողովուրդը միայն մահակներով է հաղթել հայերին»:

Փարիզում հրատարակվող «Լը ռաբբել» թերթի

թղթակիցը գրում է. «Կ. Պոլսի սարսափները մեծ, սըր-տակեղեք պատկերներ են: Իմ ներկայությամբ անմեղ անցորդներ մահակներով սպանվեցին՝ *ոստիկանու-թյան ներողամիտ հայացքի տակ*: Ես տեսա անմեղ մարդկանց՝ կտոր կտոր արված զինվորների սվինների հարվածներից: Իմ աչքերի առաջ բաշխրոզուկների և տարբեր տրամաչափի տականքների ամբոխը, զին-ված երկաթե մահակներով, կեռ երկաթներով ու ա-հագին չափսի մեծ ցիցերով, որոնց այստեղ սոփա են ասում, զորքի բարձր հովանավորությամբ ներխուժում էին փողոցները, սրճարանները, տները և կոտորում էին այնտեղ գտնվող մարդկանց և քաշքշում էին փո-ղոց, որտեղից անցնող սոփտաները, մուլաները և սպաները ճզմում էին մինչև վերջին շունչը իրենց մա-հակներով ու ոտքերով...: Սոփտաները ճզմված դիակ-ներից կտրում էին մսի կտորներ ու նետում փողոցի շներին...: Իմ առջևով անցան բազմաթիվ աղբատար սայլեր, թխմված սարսափելիորեն այլանդակված դի-ակներով, որոնց նայելիս նյարդերս սարսռում էին: Դրանք ամենամարդատյացորեն և անկարգ կերպով շարտված էին սայլերի մեջ և, երևում է, ծաղրելու հա-մար, շատերի բերանում սիգարներ էին խցկված, ո-րոնց մեջ առանց այլևայլի կային նաև դժբախտներ, ո-րոնք դեռ շնչում էին: Գալատայի ամենամեծ փողոցում մեզ հետ քայլում էր մի հայ քահանա, որը հալածանք-ներից կմախքի էր վերածվել: Մի քանի զինվորներով ուղեկցված մի սպա ասաց նրան. «Անցիր փողոցի մյուս կողմը, այստեղ քեզ համար անվտանգ չէ»: Քա-հանան անցավ փողոցի մյուս կողմը, սակայն զինվոր-ները ամմիջապես գնդակահարեցին նրան: Մեր նավե-րից մեկի վրա, որը խարխախ էր զցել Թոփխանեյի դիմաց, աշխատում էին ութ հայ բեռնակիրներ: Նրանցից հինգը, հենց որ ափ իջան, տեղն ու տեղը կոտորվեցին բաշխրոզուկների կողմից: Մեզանից եր-կու քայլ անդին, երեք հարյուր հայ ածխահատներ մինչև վերջինը հավերի պես մորթվեցին իսկ դիակնե-

ըը կտրվեցին մսագործի ջարդած մսի պես: Հաջորդ օրը, կեսօրից հետո, ժամը մեկի կողմերը, մեր ուշադրությունը գրավեցին բազմաթիվ հրացաններով ու սփիններով կանոնավոր զինված զինվորներ, որոնց մեջ չկային բաշիբոզուկներ և հաստագլուխներ: Նրանք շարվեցին ծովափին, իսկ հետո շրջապատեցին արտաքնապես բավականին բարետես մի քանի տներ: Լսեցինք, որ այդտեղ կային թաքնված հայեր, և մենք կարծեցինք, որ զորքը եկել է նրանց պաշտպանելու: Սակայն մեր պատրանքը շատ կարճ տևեց: Չիավոր սպաները շտապ գնում ու գալիս էին զինվորների առջև, հրամաններ տալիս, և հանկարծ լսեցինք հրացանների կազմակերպված կրակոցներ անիծյալ տների վրա: Ապակու ջարդված կտորները թափվում էին գետնին, գնդակները սուլում էին և ծակում ոչ հաստ պատերը և սոսկալի մահ էին սփռում այնտեղ թաքնված հայերի վրա: Վերջիններս փորձում էին փախչել հարևան տները, վազում էին տանիքից տանիք, պատըշգամբից պատշգամբ, բայց թե յուրաքանչյուր վազող կետ ծածկվում էր արծակված գնդակներով: Գտնվելով բարձր տեղում, մենք տեսնում և հետևում էինք կատարվող սարսափելի դեպքերին: Տանիքի վրա շարժվում էին ստվերներ, որոնք ցույց էին տրվում մոտակա մզկիթի խոջանների կողմից և փամփուշտների հետ կարկտի պես քարեր էին թափվում խեղճ փախչող հայերի վրա: Կրակե շրջանակը սեղմվում էր, զինվորները մոտենում էին և լցվում տները: Սենյակներում ոչ ոք չկար, ողջ մնացած հատ ու կենտ թշվառները գտնվում էին պատշգամբներում: Հանկարծ մի տան վերևի պատշգամբում երևաց կապույտ երկնքում գծագրված մի քահանայի ստվերը, որն աղոթում էր իր առջև ընկած մի քանի մահամերձների վրա: Փամփուշտների մի անծրև թափվեց նրա վրա: Քահանան խոնարհվեց և հետո նրա ահագին ստվերը նորից բարձրացավ: Ակներև էր, որ նա աղոթում էր: Հանկարծ գնդակների մի նոր տարափ թափվեց քահանայի վրա, որից հետո



զինվորները սրերը մերկացրած ներխուժեցին այդ տունը, և... այլևս ոչինչ: Արևելյան սպանդանոց: Դեռ կենդանի մնացած զոհերից մի կին, ամուր կառչած էր մի պատշգամբի ճաղերից և կախված էր անդունդի վրա: Եվ դահիճները այս դժբախտի վրա տեղացին գնդակների մի տարափ, և նրան գետնին փռելուց հետո, նրա դիակը ոտքերով ճզմեցին: Այդ կնոջ ընկնելը ինձ վրա սոսկալի տպավորություն գործեց: Ընկնելիս նրա մարմինը օդում մի քանի անգամ պտտվեց և խփվեց ավելի ցած գտնվող պատշգամբի երկաթներին և սոսկալի կերպով գլորվեց գետին: Մի քանի շաբաթս չէի կարողանում քնել այս վայրի և ահավոր տեսարաններից, որոնք կատարվեցին իմ աչքի առաջ:

«Կոստանդնուպոլսի դժոխքը» վերնագրի տակ սերբական «Նովինե» թերթի 4.Պոլսի թղթակիցը գրում է<sup>1</sup>. «Ես տեսա մի թուրքական սրճարան, որտեղ հատակը ողողված էր արյամբ, ներկա եղող թուրքերի ձեռքերը, ոտքերն ու երեսները նույնպես արյունոտ էին: Գալատայի գլխավոր փողոցի երկու կողմերը, որտեղից ջուր է հոսում, լիքն էր արյունով և մարդկային մսի կտորներով, որոնց վրա հավաքվել էին փողոցի շները: Փողոցով գնում էր մի ֆայտոն: Կառապանի մոտ նստած էր մի զապտիե, որը հավանորեն հսկում էր ֆայտոնում նստած մարդու վրա: Միևնույն ժամանակ փողոցից անցնում էր բաշիբոզուկների մի ամբոխ: Նրանք անմիջապես կանգնեցրին ֆայտոնը, զապտիեյին իջեցրին, բաց արեցին դուռը և այնտեղից դուրս քաշեցին մի կիսամեռ հայ բանկիրի, որին տեղն ու տեղը սպանեցին իրենց դանակներով, որից հետո

<sup>1</sup> Հավաստի տվյալների համաձայն, կասկածում եմ, որ սերբ թղթակիցը, որ նույն ինքը սերբական դեսպան պրն. Վլ. Գեորգևիչն է: Քանի որ արգելված էր ամեն տեսակի լուրեր 4.Պոլսից դուրս ուղարկելը, նրա ազնվություն պրն. Գեորգևիչը այդ հեռագրերը ծրարով ուղարկում էր մասնավոր մարդկանց միջոցով մինչև Հարմանլի (քաղաք Բուլղարիայում – ժանոթ. թարգմ. ) և այդ քաղաքից իր մարդկանց միջոցով հասցնում էր Բելգրադ:

գրպաններից կողոպտեցին ամեն ինչ: Քիչ այն կողմ հինգ հայեր կոտորվել ու ջարդվել էին մի ուրիշ բաշիբոզուկ ամբոխի կողմից, առանց արգելվելու մոտիկ կանգնած զինվորներից: Սոտակա փողոցում իմ ուշադրությունը գրավեց մի կին, որը բղավում էր մի լուսամուտից: Ինչ որ մեկը նրան ներս բաշեց, բայց նա շուտով կրկին հայտնվեց մի երեխա գրկին և իրեն վար գցեց լուսամուտից: Խեղճ երեխայի գանգը փշրվեց սալահատակի վրա, իսկ մոր որքերը կոտորվեցին: Քիչ անց նույն լուսամուտից դուրս շարտվեց մի տարիքավոր հայի այլանդակված դիակը: Նույն այդ ժամանակ հանդիպեցի մի խումբ հայերի, որոնք սարսափած փախչում էին բաշիբոզուկ հրոսակներից: Հայերը թեքվեցին մի փոքրիկ փողոց: Ի դժբախտություն նրանց, նրանց դիմավորեց մեկ ուրիշ հրոսախումբ, ավելի մեծ, քան նախորդը: Հայտնվելով երկու կրակի արանքում, հայերը բուլորն էլ կոտորվեցին մորեխների պես: Այդ գիշերվա սարսափները իմ հոգու վրա թողեցին սոսկալի տպավորություն: Ու ես մտածում եմ, որ Կ. Պոլսի ահավոր սպանդից ավելի սարսափելի դրվագներ քիչ են հայտնի»:

Բեռլինում լույս տեսնող ամենահեղինակավոր և ամենալուրջ «Tageblelatt» («Օրագիր») թերթի թղթակիցը «Մուսուլմանական հալածանքներ» խորագրի տակ գրում է. « Ես սեփական աչքերով տեսա ամենավայրի բարբարոսին, ես տեսա այն թուրք ժողովրդին, որին միշտ համարում էի բարի (?!!): Նրան տեսա վայրի, բարբարոսական, մոլեռանդ, արնախում: Տեսա փողոցներում վազող հազարավոր թուրքերի՝ կատաղի գոռոցներով, ինչ որ աղոթքներ մրմնջալով և սպանում էին անմեղ մարդկանց: Ես տեսա փողոցի անկյունում 30-40 հոգիանոց խմբեր, որոնք սպասում էին որևէ հայի, որպեսզի հարձակվեն վրան, սպանեին կամ մորթեին, ինչ որ չէին անում նույնիսկ կատաղած շան հետ: Իմ աչքերի առջև մի հայ հոգևորական հարձակման ենթարկվեց թուրքերի մի հորդայի կողմից, որոնք իրենց

մահակներով արյունոտ զանգվածի վերածեցին նրան: Ես տեսա թուրք ոստիկանների, որոնք ականատես էին այս արյունոտ տեսարանին: Տեսա մի հեծյալ ջրկատ, որը հսկում էր, որպեսզի ոչ ոք օգնության չհասնի այս դժբախտներին: *Ես տեսա այս փաստերը՝ ավելի քան քսան անգամ կրկնվելիս, և ոչ մի անգամ չտեսա, որ ժանդարմները կամ զինվորները արգելեն թուրք հրոսակի՝ մարդասպանի իր փողոցային զբաղմունքին:* Գալատայում տեսա բազմաթիվ սպանված հայերի դիակներ՝ փողոցներում փռված, իսկ նրանց դիակների վրա անամոթաբար ծաղրուծանակի ենթարկող սոֆտաներ և խոջաներ: Իմ ապրած Յենգելի փողոցում, երեք հետիոտն հայեր, կես ժամվա ընթացքում պաստիլի էին վերածվել կատաղած ամբոխի երկաթե մահակներից: Գիշերը փողոցից անցնելիս հանդիպեցի դիակներով լցված սայլերի: Իմ աչքերով տեսածից և այն բանից հետո, որ լսեցի ականատեսներից, ենթադրում եմ, որ հինգշաբթի օրը սպանվել է առնվազն 8000 հոգի...»

4. Պոլսում անգլիական դեսպանի փոխանորդ պարոն Յերբերտը հետևյալը հեռագրեց Լոնդոնում իր կառավարությանը. «Գալատայից անցնելիս տեսա կոտորված հայերի դիակներով լիքը մի սայլ, որը կամաց անցավ իմ կողքով: Դիակների մեծ մասի գլուխները գազանաբար ջարդված էին: Դիակների վրա գտնվում էր մի մեռնող հայ, անմարդկային կերպով ջարդված գանգով: Լճացած արյան կողքին գտնվում էր մեկ ուրիշ այլանդակված դիակ, որի գանգը, հավանորեն կացինով երկու մասի էր բաժանված, և որի ուղեղը թափվում էր բաքմազի նման: Անհնար է մանրամասն նկարագրել 4. Պոլսում իրագործված սարսափները թուրքական վայրի ֆանատիզմի հետ միասին» - ավարտվում է պարոն Յերբերտի հեռագիրը:

Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան պարոն Պանսան, գրում է հետևյալը. «Իմ առջև երկու թուրքեր վայրի գազանների նման հարձակվեցին մի

հայի վրա, որն անմիջապես կտոր-կտոր արվեց»։ Միևնույն ժամանակ անցնում էր մի պահակախումբ և պարոն Պանսան հրավիրեց սպայի ուշադրությունը կատարված փաստի վրա, բայց սպան պարոն Պանսային ցույց տվեց ճանապարհը, զգուշացնելով, որ հարձակման դեպքում ինքը չի կարող փրկել նրան գազազած ամբոխի ձեռքից։ Պարոն Պանսայի հաշվումնենով միայն ծով էր նետված 2000 խեղդամահ արված հայերի դիակներ։

\*  
\* \* \*

Այսպիսի օրինակներ կան հազարներով։ Անհրճար է այդ ամենը հավաքել այսպիսի մի փոքրիկ գրքում։ Սակայն այս մի քանի օրինակովն էլ կարելի է եզրակացնել, ինչպես է ընթացել և ինչպիսի սարսափելի պատկեր են ներկայացրել Կ. Պոլսի կոտորածները։

Նշանակալի է նաև այն, որ թղթակիցներից կամ կոտորածների ականատեսներից նրանք, ովքեր չեն գրում հայոց խանութների ու կրպակների կողոպուտների մասին, որոնք ընթացել են սպանություններին ու ջարդերին զուգընթաց։ Երևում է, որ ի տես ահավոր ասիական կոտորածներին, աչքաթող են արել այդ, որպես սովորական անկարևոր երևույթ։

Սեզ լավ հայտնի ավետարանական մի քարոզիչ, որի անունը իր հատուկ խնդրանքով չենք հայտնում, մեզ գրել է. «Թուրքական սոսկալի անկարգությունները, որոնց ականատեսն եղա Կ. Պոլսում, իրենց սարսափներով հազիվ թե համեմատվեն Թամերլանի պատմական կոտորածներին ու դաժան տանջանքներին։ Հետո ամբողջ Ստամբուլը ներկայացնում է մարդկային սպանդանոց։ Սարդկային դիակների կտորտանքներ ամենացինիկ կերպով թափված են փողոցներում, որոնք կարծես ենթարկված էին Սուհամեդի հետևորդների վայրի ծաղրին ու արհամարհանքին։

Մարդկային արյան լճերը լցրել էին փողոցները, որոնց մեջ լողում էին մորթվածների մսի կտորները: Ոչ, ես չեմ կարող նկարագրել թուրքական գազանությունները, որոնք ամենից սոսկալի և ցնցող են, և որոնք մի մեծ բիծ են ժամանակի քաղաքակրթության համար»:

Կ. Պոլսի սպանդանոցի մանրամասն նկարագիրը այլևս ներկայացնում է մի ամբողջ գրականություն: Ամենացնցող պատկերներ կան անգլիական «կապույտ» և ֆրանսիական «դեղին» գրքերում: Իր սարսափներով և իր անօրինականությամբ, հայկական կոտորածները, այդ թվում նաև Կ. Պոլսինը, ներկայացնում են որպես ֆանտաստիկական մի տեսարան, սակայն, իր ամբողջության մեջ լրիվ ճշմարիտ է: Մարդ պիտի վերադառնա Չինգիզ խանի և Բաբերայի ժամանակները, երբ Դելիում միանգամից մորթվեց հարյուր հազար մարդ, որպեսզի Կ. Պոլսում և Հայաստանում հայերի հանդեպ գործված թուրքական կատաղությունների և բարբարոսական կոտորածների նման մի բան գտնի:

\*

\* \*

Այս բոլոր ասիական դահճությունները, այս ամեն չինգիզխանական բնաջնջումները, հալածանքները, սպանությունները, մարդկանց մորթոտելը, «Բաբը Ալիի» բակում ներոնյան ծևով մարդկանց ցցի հանելը, մարդկային արյան սարդանապալյան լակումը, խավարչտին զնդաններում մարդկանց սելջուկյան մեթոդներով խեղդամահ անելը, Սարայ-Բուրունի փլրփրադեզ ալիքներում մարդկանց խորհրդավոր անհայտացումը, արյան պես կարմրատակած, թեժ երկաթով հայերի խոշտանգումները, քանզի վերջիններն իրենց արդարությունը պահանջեցին երիցս անիծյալ Եվրոպայի ներողամտությամբ արքայական, ուրվականի թիկնոցով ծածկված նենգ ու գազազած ասիացուց, զնդաններում բոլոր հայ երիտասարդների մինչջրհեղեղային

տանջանքները, բոլոր այն խոշտանգումները, որոնք սազական են միայն անատոլական եկվորներին: Կեղտոտ ու արյունոռուշտ շներին, և այդ բոսֆորյան բռնակալին, որին ենթակա է ամբողջ հայ ժողովուրդը, հնարավոր է արդյոք որ այն «մեծ մարդասպանը» և մեծ չալնայակիրը կասեցնի հայ ժողովրդի գաղափարը, արգելակի ազատասիրական շարժումը այն ժողովրդի, որն արիաբար ձեռնոց չպրտեց ասիական այս անգլուխ արյունարբուի երեսին: Պիտի կարողանա՞ր արդյոք, Ստամբուլի այս բռնակալը, որի արյունոտ ձեռքերը թաթախված են քրիստոնյա ռայայի հազարավոր մարդկային դիակների արյունով, իր կրծքում խեղդել հայ ժողովրդի ոսկի ազատության նվիրական ձգտումները:

Ո՛չ, և երբեք ո՛չ: Ի հեճուկս Կ. Պոլսի դահճին, նա չի կարողանա հասնել դրան, եթե հարյուրապատիկ անգամ իսկ սաստկացնի հավատաքննչական տանջանքները այս թշվառ ժողովրդի հանդեպ: Այս «մեծ արյունախումը» պետք է հասկանա, որ ինչպիսի դժոխային միջոցներ էլ գործադրի, չի կարող «հանգցընել այն, ինչը երբեք չի հանգչում»: Քանզի այնտեղ որտեղ աջ ու ձախ խաղացել է բռնակալի սուրը, այնտեղ միշտ էլ ծագել է ոսկի ազատությունը, որը քարոզել, փոշի է դարձրել ստրկության վերջին շղթաները...: Եվ եթե նրա նախապապերը, մի ժամանակ չկարողացան գլխովին կոտորել քրիստոնյա ժողովուրդներին, որոնց ստրկացրին, առավել ևս այդ չի կարող անել սուլթան Համիդ 2-րդը, որը մեծ է միայն հանցագործություններով ու ոճիրներով, և որը կոչվում է «կայսր» և թագավորում է միայն նրա համար, որ անիծյալ, մեծամիտ, անհոգի եվրոպան հաշիվներ ունի նրա խախուտ գահի հետ, գուցե և նրա հարեմի հետ...: Ամենագոր և մեծ է նա չարագործությունների, կոտորածների մեջ, որովհետև նրա ցեխոտ և արյունաթաթախ մայրաքաղաքում խաչածնվում են քաղաքական խարդախ և տնտեսական շահադիտական հաշիվները քա-

ղաքակրթված լրբի, որը կոչվում է Եվրոպա, առավել  
ևս այս շուն քրիստոնյաները... որոնք կոչվում են  
անգլիացիներ և ավստրիացիներ: Չնայած օսմանյան  
հյուծախտավոր թագավորության հյուծախտավոր վի-  
ճակին, սուլթան Չամիդը թող չկարծի թե ապրում է  
Մեռյալ ծովում, որտեղ ըստ ավանդական պատմու-  
թյունների, ոչ մի կենդանի էակ չի ապրում: Այն ինչ  
չկարողացան օսմանյանները, սյուլեյմանյաններն ու  
սելիմյանները, չնայած փորձերին այն ժամանակ, երբ  
ամբողջ Եվրոպան տապալված էր նրանց ուրբերի  
տակ, երբ ցիուդական Ավստրիան Վիեննայում խո-  
նարհվում էր ուղղափառ չալմայականների առջև, որ-  
տեղ մինչև օրս վեր է խոյանում սուլթան Սուլեյմանի  
պատմական հեթանոսական տաճարը, բնավ հավա-  
տալու բան չէ, որ այսօր այդ բանը կարող է անել այս  
հարեմական սանը, այսինքն մորթոտի իր քրիստոնյա  
հպատակներին, չնայած ամեն օր, ամեն ժամ առան-  
ձին առանձին և կամ մի քանի հոգի միասին կոտոր-  
վում են անհավատները, լինեն հայեր, թե բուլղարներ՝  
Մակեդոնիայում: Սուլթան Աբդուլ Չամիդը ինչպիսի  
կոտորածներ գործադրի հայերի նկատմամբ, ինչպիսի  
դժոխային և ահավոր ճնշումներ կիրառի Մակեդոնիա-  
յի բուլղարների հանդեպ, մեկընդմիջտ *պետք է իմա-  
նա*, այնպես էլ բոլոր ռայաները, որոնք տնքում են նրա  
լծի տակ, մինչև չնվաճեն իրենց քաղաքական ազա-  
տությունը, որը երաշխավորի իրենց կյանքը, ինչքն ու  
պատիվը, չեն թողնելու հեղափոխության գործը, որի  
համար տվել են և անընդհատ տալիս են թանկագին  
գոհեր: Սուլթան Չամիդը շատ է սխալվում, եթե կար-  
ծում է թե հույների վրա հաղթանակ տանելով պիտի  
վախեցնի ռայային, թեկուզև քնի դափնեպսակների  
վրա՝ շրջապատված ամենաերիտասարդ հարեմական-  
ներով...

Չաղթանակները հույների նկատմամբ, նրա հա-  
մար լայն երախը ընդմիջտ բաց արած մի սուկալի  
գահավեժ գերեզման է, քանզի ցնդեցրին ֆանտազիա-

յով ապրող շովինիստ հույների գլխից, որ թուրքը թուրք է, որ նա հավասարապես վտանգավոր է, ինչպես հույներին, այնպես էլ բուլղարների և հայերի համար, որ նրանք տեսան, թե ինչ են նշանակում թուրք չարագործները թեսալիայում: Բացի այդ սուլթան Համիդը պետք է լավ տարբերի սլավոններին՝ հույներից, քանզի սլավոնները կերան օսմանյան կայսրությունը, և եթե չեն սխալվում, *նրանք էլ պիտի վերացնեն այն*<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Երկու-երեք տարի է ինչ, որ սուլթան Համիդը և նրա կառավարությունը Մակեդոնիայում խաղում են մի շատ վտանգավոր խաղ, աշխատելով ամենակեղտոտ միջոցներով, որոնք ունեն իրենց տրամադրության տակ, մի հարվածով ընկճելու, քարոզելու, ոչնչացնելու Մակեդոնիայում ապրող բուլղարներին, այդ բանի համար հենվելով սերբական քարոզչության վրա: Խեղճը չգիտի, որ ռայան սերբ լինի թե բուլղար, այլևս անհնար է քնեցնել վարդապետներով, որ սերբական ռայան առավել վտանգավոր է քան բուլղարականը, որոնց հետ թուրքերը հարաբերակցում են և ամենադրացիական կերպով ապրում են, որովհետև բուլղարները ավելի *երկար համբերատար են*... Բայց թե սերբերը, որ ասեցին առաջ, սատանան տանելու է հաֆլզգվաշովներին (թուրքամետների կուսակցություն – ժանոթ. քարգմ.):

Ավելի լավ արտացոլելու համար, թող որ այստեղ բերենք Սկոպիեյի մոտակայքում գտնվող սուրբ Աստվածածին վանքի աֆերան, ինչպես որ գրում են այդ քաղաքից «С» թերթին: Եզված վանքում հավաք է եղել: Վանքը բուլղարական է, քանզի վանահայրը տարիներ առաջ բանալիներն ու վանքը հանձնել է բուլղար վարդապետին: Մինչ այդ սերբերը խաբել են վանահորը, սակայն նա բուլորովին հրաժարվել է: Եվ նույնիսկ նախընտրել է հրաժարվել հույն պատրիարքից վանքը հանձնելով բուլղար միտրոպոլիտին: Այնպես որ տեղի ունեցած արյունոտ դեպքերին մատը խառն է ոչ միայն սերբերի, այլև հույն հոգևորականությանը, որը ատելությամբ է լցված բուլղարների հանդեպ և միշտ էլ համերաշխ է սերբերի հետ՝ բուլղարներին հալածելու գործում: Սույն քվականի 8-ին (սեպտեմբեր, 1897թ.) վանքում գյուղերից ու քաղաքներից բավականին ժողովուրդ էր հավաքվել: *Իբր կարգը պահպանելու համար Սկոպիեյի վալին, որի մասին խոսում են, որ սերբերից կաշառված է, վանք է ուղարկել հեծելագոր և հետևակ, սակայն ստացվում է, որ նախօրոք գործը կազմակերպված էր, բանի որ դեպքի ժամանակ գործի գործողությունները բացառապես ուղղված էին բուլղարների դեմ, որոնք ձերբակալվել են* Ա-



ռավոտյան երբ սկսվել է ժամերգությունը, սերբոֆիլները մի քանի եկվոր սերբեր, մտել են եկեղեցի ավելի շուտ: Եկեղեցի են մտել նաև բուլղար քաղաքացիներ և գյուղացիներ, բայց թե քիչ թվով: Երբ հետագայում եկեղեցի են եկել ավելի շատ բուլղարներ, սերբոֆիլները ուշքի են եկել և սկսել են պատրաստվել ինչ որ բան անելու: Վերջում եկել են մի ավելի մեծ խումբ բուլղարներ, որոնց մեջ եղել են մի քանի ուսուցիչներ Սկոպիեյից և գյուղերից: Սերբերը վախենալով բուլղարների շատանալուց, շտապել և փակել են եկեղեցու դռները: Այնժամ թուրք զինվորները հարձակվել են դրսում գտնվող բուլղար քաղաքացիների և գյուղացիների վրա, և սկսել են զենքի կոթերով ծեծել, մի քանիսին տապալելով գետին՝ սաստիկ ծեծված վիճակում: Ամենից շատ ծեծված էր ուսուցիչ Սանովը: Նրան հարվածել են զենքի կոթով գլխից՝ վտանգավոր կերպով: Հիմա նա ձերբակալված է Սկոպիեյում: Այն բուլղարները, որոնք եկեղեցում էին, աշխատել են դուրս գալու: Բայց թե սերբերը հարձակվել են նրանց վրա և սկսել են հարվածել: Բացվել են եկեղեցու դռները, և զինվորները սերբոֆիլներին բռնելու տեղը, վերջինների ցուցմունքով, բռնել են մեկ-մեկ դուրս եկող բուլղարներին և սկսել են ծեծել: Այդ ժամանակ վրա է հասել նաև հեծելազորը (300 ծխավոր), որը հարձակվել է բուլղարների վրա և ծեծելով ցրել է նրանց: Կանանց ու երեխաների ճիչերը աննկարագրելի էին: Այնուհետև սերբոֆիլները, հանդիսավոր հաղթանակներից հետո, ձեռք բերված թուրքական հեծելազորի թրերով, ճոխ սեղան են բացում և թուրք զինվորներին հյուրասիրում: Սպաներին գովաբանել են, հանել մինչև երկինք՝ նրանց կատարած հերոսությունը անգեն ժողովրդի, կանանց ու երեխաների վրա: Հաջորդ օրը իշխանությունները հարմար են գտել ձերբակալելու մանկավարժական ուսումնարանի տնօրեն Միտովիմ: Խաղաղությունը կնքվեց և սուլթանը կատարում է իր խոստումը: Նկատելի է նաև, որ դեպքերի վայրում ներկա են եղել նաև ռուսական և սերբական դեսպանները: Ռուսական դեսպանը ասել է սերբերին և զինվորներին. «Կրակեցե՛ք, ես պատասխանատու եմ»: Նույն համարում գրում են. Դեդինո գյուղը (Ռադովիչկոյում) ավերված և ամայացած է թուրքերից: Պատճառաբանելով, որ մաքսանենգ ծխախոտ կա, թուրքերը գյուղում և գոմերում փնտրել են զենք և ինչ որ կոմիտաներ: Ռադովիչից ուղարկված զապտիեները, ներխուժել են տները, իբր ստուգելու, իսկ իրականում սկսել են թալանել գյուղացիների տները, երբ վերջինները դաշտում էին: Ձերբակալվել է գյուղի քահանան և դաժանորեն խոշտանգվել, և ծեծի են ենթարկվել շատ ուրիշ գյուղացիներ: Երբ զապտիեները հարձակվել են մյուս գյուղացիների վրա, վերջինները սկսել են պաշտպանվել, վախենալով, որ քահանայի

Մենք, ովքեր հավակնություն ունենք ճանաչելու հայկական ժողովրդական կոմիտեների կազմակերպությունը, որոնք իրենց առջև սրբազան խնդիր ունեն՝ հայ ժողովրդին ազատագրելու ասիացու յաթաղանից, և երբեք դեն չեն նետելու իրենց դրոշը, մինչև չիրագործեն իրենց ազգի նվիրական գաղափարը: Այս համարձակ կազմակերպությունը արժանի է ազատության բոլոր բարեկամներին, այն բոլոր ժողովուրդների հարգանքին, որոնք դեռ անամոթաբար կրում են թուրքական գերության մաշված շղթաներից, մանավանդ մեզանից, մակեդոնական բուլղարներից, առանձնապես մեր կոմիտեներից, որոնք իբր նույն խնդիրն ունեն, ինչպես հայերինը: Հայկական հեղափոխական կազմակերպությունը պետք է ծառայի որպես օրինակ և հիմք՝ մակեդոնական կոմիտեների համար, բացի այդ, մեր կոմիտեների առջև ծառայած է մեծ պարտականություն՝ *ամենից սերտ հարաբերություններ հաստատելու հայկական կոմիտեների հետ:*

Հայկական հեղափոխական կազմակերպությունները մի խառնուրդ են մի ժամանակվա կարրոնարների, հայդուկային ընկերությունների՝ Իտալիայում և Իսպանիայում, նույնպես երբեմնի անդալուզյան ջոկատների: Այս գաղափարի և կազմակերպության սկզբնավորողն է հայրենասեր Նուբար փաշան՝ թուրքական կառավարության երբեմնի պաշտոնակատարը: Շնորհիվ այս խիստ որոշարկված կազմակերպության, չնայած ահավոր մեծ սարսափներին և *գլխովին կոտորածներին*, որոնք տեղի են ունեցել և ունենում են Հայաստանում, այդ ընկերությունների և կոմիտեների անդամներից շատ քչերն են ընկել կատաղած թուրքերի յաթաղանից: Եվ սա ինչ որ տեղ մխիթարական է

---

և մյուս խոշտանգված գյուղացիների օրը չընկնեն: *Այդ ժամանակ զապտիեները սկսել են կոտորել և կրակել: Նրանց օգնության են հասել գորբը և Ռադոփիչի բաշիբոզուկները: Ամբողջ գյուղը ավերված է: Բազմաթիվ գյուղացիներ սպանված են, և շատ կանայք ու աղջիկներ բռնաբարված: Դա երկրորդ Բատակն էր:*

գոնե 19-րդ դարի այս անօրինակ հայկական կոտորածների համար: Որքան որ հեղափոխականներ, ազատագրական շարժման ղեկավարներ, մինչև այժմ թուրքական զնդաններում և կախաղանների վրա զոհված, ավելի մատնության հետևանք են, և որքան որ զգվելի լինեն դրանք, սովորաբար տեղի են ունենում հեղափոխությունների ժամանակ:

Թուրքական ոստիկանությունը, ի տես իր ամբողջ քաջության, ամբողջ հալածանքներին, չնայած փողոցային խոշոր խայտառակություններին, մինչև այսօր ոչ մի դրական գործ չի կատարել: Այդպիսի գործերի համար նա անկարող է. նույնիսկ եթե բարեկարգվի էլ մինչև երկրորդ գալստյան... Բայց թե սուլթանին ինչին է պետք ոստիկանություն, երբ հանգիստ ու ազատորեն իրականացնում է ամբողջ կոտորածներ:

\*  
\* \* \*

Որ հայ ժողովուրդը որոշել է կոմիտեների գլխավորությամբ պայքարը տանել մինչև վերջ, երևում է ստորև բերված հայտարարություններից, հրապարակված հայկական ամենակարևոր կոմիտեների՝ «Դրոշակի» և «Դաշնակցության» կողմից: Այս վերջինը ի հեճուկս «մեծ մարդասպանին» և Մուհամեդի բոլոր հետևորդներին, իր նստավայրն ունի սուլթանի և արևելքի շների մայրաքաղաքում, բոլոր տեսակետներից ցեխոտ Ստամբուլում:

Ահավասիկ այդ հայտարարությունները.

«Ֆեղափոխական շարժումը, հաստատված 1897-ի օգոստոսի 5-ին Վանի վիլայեթում, եվրոպական մամուլում դարձել է տարբեր մեկնաբանությունների առարկա:

Որոշ թերթեր միտումնավոր կերպով լռելայն են անցել այս փաստի կողքով, ուրիշները ցանկանում են նրան տեսնել որպես հնդկական գործերի բանալի, իսկ «մեծ մարդասպանի» կառավարությունը սկզբում աշ-

խատեց մի պաշտոնական հեռագիր ուղարկելով Վիեննայի «Թղթակցությունների բյուրո» թերթին, մերժելով նույնիսկ այս շարժման գոյությունը, իսկ որոշ ժամանակ անց, չկարողանալով թաքցնել իրականությունը, այն ներկայացրեց որպես ավազակային մի ակտ, հայ ապստամբներին վերագրելով գազանություններ, որոնք կատարվել էին Հայաստանում և Թեսալիայում իր սեփական զինվորների ձեռքով:

Իրականությունը վերականգնելու համար «Դրոշակի» խմբագրությունը իր պարտքն է համարում պաշտոնապես հայտարարելու, որ հայերը, որոնք 1897 թվականի օգոստոսի 5-ից կռվում են թուրքական զորքերի և քրդական հորդանների դեմ, ավազակներ չեն, այլ հայկական հեղափոխական դաշնակցության կողմից լավ կազմակերպված չեթեմեր, որոնց քաջությունը վաղուց է ինչ արդարացիորեն գնահատվել է թուրքերի կողմից, որոնք նրանց տվել են հերոսական *ֆիդայի* մականունը, նույնպես քրդերը, որոնք իրենց երգերում և ժողովրդական առակներում ու ասույթներում գովաբանում են նրանց հանդգնությունը, թե «ֆիդայու արձակած գնդակը հետապնդում է քրդին, զըտնում ու սպանում է նրան»:

«Մեծ մարդասպանը» թող չմխիթարվի այն մըտքից, թե նրան հաջողվել է իր գործակալների միջոցով թյուրիմացության մեջ գցել Եվրոպայի հասարակական կարծիքը հետևյալ հայտարարությամբ: «*Հայերի մեջ ծայրահեղ տարրերն ու կոմիտեները վախեցած անցյալ տարվա կոտորածներից, կորցրին իրենց հույսը մի նոր շարժման հաջողության վրա*»:

Պե՞տք է արդյոք կրկնել, որ հայկական շարժումը մի քանի անհատների պատրանքային երազանքների արդյունքը չէ, ոչ էլ մի խումբ պատվարժան գործիչների՝ մատներից ծծած նպատակ, այլ որ այն ծնունդն է հայերի արդի կյանքի *անտանելի* պայմանների, որ այն խիստ բողոք է մի ժողովրդի, որը պահանջում է կյանքի, պատվի և ինչքի ապահովություն: Սակայն

Եվրոպան չի ցանկանում հասկանալ և խուլ է ծեանում:

Ինքնահավան քաղաքակիրթ եվրոպան, որը հանձն է առել բարեփոխելու թուրքական պետության մեջ ապրող քրիստոնյա հպատակների վիճակը, փոխանակ բուժելու գոյություն ունեցող չարիքը, լուսավորել է մի արյունալի դարաշրջան, մի անխիղճ ու անհաշտ կռվի դարաշրջան, և ի դեմս հայ ժողովրդի արդարացի պահանջների՝ *բարձրացրել է 300000 դիակներից կազմված մի բուրգ*:

Արդյունքը եղավ այն, որ կյանքի չարաբաստիկ պայմանները, որոնց դեմ բողոքում էր այս դժբախտ ժողովուրդը, հասել է մեծ չափերի, և մանավանդ 1894, 1895, 1896 և 1897 թվականների կոտորածներից հետո դարձավ ավելի ու ավելի անտանելի:

Թուրքիայում կյանքի ապահովություն տրվեց 300000 հայեր մորթելուց հետո. հիմա հայերի կյանքը ենթարկված է վերջին անկուտիի կամայականություններին: Անպատվելուց հետո պատվի ապահովություն տրվեց հայ կանանց ու նրանց դուստրերին: Եվ հիմա Թուրքիայում ոչ մի հայի ընտանիք նվազագույնս անգամ չի պաշտպանված:

Հայերի ամեն ինչը թալանելուց հետո, ունեցվածքի ապահովություն տրվեց և այժմ զրկված է տնից, մերկ է ու սոված:

Հիմա հային մեկ միջոց կա միայն ապրելու համար, այն է՝ *հեղափոխությունը*, որը նրա ձեռքին զենք է տալու, որով կռվելու է թշնամու դեմ՝ իր գոյության համար և վերջ է դնելու մի վիճակի, որը դարձել է անհանդուրժելի և անտանելի:

Ահա թե ինչպես է բացատրվում «ֆիդայու» երեվան գալը, որն ամեն ինչ կորցրեց, այն ինչը ամենից սիրելի էր նրա համար՝ հայր, մայր, եղբայրներ և քույրեր, և դեռևս մի բան է կապում նրան կյանքի հետ՝ թշվառ զոհերի համար վրեժխնդիր լինել և կռվել վայրենիների դեմ, որոնք սպառնում են իրենց ժողովրդի գոյությանը և իրենց մահով ապահովում են եղբայրների

կյանքը:

Եվ այն փաստը, որ հիմա ֆիդայիների շարքերը դառնում են ավելի ու ավելի բազմանդամ, միթե մի գեղեցիկ ապացույց չէ, որ հայ ժողովուրդը ընդգրկել է հեղափոխությունը, որից միայն սպասում է իր փրկությունը: Թյուրիմացության մեջ են նրանք, ովքեր հավատում են, որ վերջերս նկատվող անգործությունից, հայերի հեղափոխական շարժումը հանգել է:

Թող իմանա «մեծ դահիճը», որ հայ ժողովուրդը, չնայած դաժանորեն ոտնակոխ է արված և հալածական է, չնայած անխիղճ կերպով մորթված և հալածված է, հուսախաբված չէ և զենքը ցած դնելու մտադիր չէ: Հայկական հեղափոխությունը մեռած չէ, քանի մինչ այժմ գոյություն ունեն այն պայմանները, որոնք ստեղծել են նրան»:

*«Դրոշակ»*

*(Հայ հեղափոխական դաշնակցության օրգան)*

Այս է հայոց գործադիր կոմիտեի հայտարարությունը, որի կենտրոններն են Լոնդոն և Նյու-Յորք քաղաքները:

Իսկ «Դաշնակցության» Կ. Պոլսի կենտրոնական կենիտեն հրատարակել է հետևյալ հայտարարությունը. «Դժվարին շատ տարիների ընթացքում հայի արյունը հեղվել է, իսկ հայ կինը անպատվված էր, ամեն սրբություն պղծված, ոտնակոխ էր արված և հայը զրկված էր բողոքելու իրավունքից, հարկադրված էր լռելու:

Ի վերջո հայերի նկատմամբ կատարված խժոժությունների լուրը հասավ Եվրոպայի պետական այրերի լսողությանը, որոնք այն դարձրին իրենց քննությունների առարկան, սակայն, այդ անտանելի վիճակը բարելավվելու փոխարեն ավելի վատթարացավ:

Մի սիստեմատիկ հալածանք, որը վերկից՝ «մեծ դահիճի» կողմից էր հրամայված, չուշացավ հանդես

գալ: Սպանություններ, բռնաբարություններ, կանանց առևանգում, խժոժություններ, բռնություններ, մի խոսքով այն ամենը, ինչը մի ժամանակ կատարվում էր մթնում, կատարվեց օրը ցերեկով՝ եվրոպական դեսպանների աչքի առաջ, որը բեռլինյան դաշնագրով երաշխավորում էր կյանքի անվտանգությունն ու լրիվ անդորրություն Չայաստանում: Չնայած հալածված, հյուծված, մենք նորից հույսներս չէինք կորցրել: Հավատացած էինք, որ հայ ժողովրդի տառապանքները, որ հասնեն եվրոպական ժողովուրդների լսողությանը, այնուամենայնիվ, մեկն ու մեկը իր օգնության ծեռքը մեկնելու էր մեզ: Ջուրը որ կաթիլ-կաթիլ ընկնում է քարածայրի վրա, կծակի այն, և միթե հեղվող հայկական արյունը չէր կարողանալու հասնել եվրոպային<sup>1</sup>: Հայերի հայրենիքը վերածվել է մի հսկայական սպանդանոցի, մի մեծ բրգածև գերեզմանոցի: Հայաստանի լեռներն ու կիրճերը ներկվեցին մարտիրոսների արյամբ, այրիների ու որբերի սրտակեղեք ողբերը երկինք էին հասնում: Սակայն այս ամենը նորից բավական չէր, որպեսզի քնած եվրոպայի հիշողությունը զարթեցներ և հիշեցներ քրիստոնեական իր պարտականությունը

---

<sup>1</sup> Եվրոպան մի կեղտոտ և անօրինակ լիրք է, ինչպիսին որ կան Կ. Պոլսի արվարձաններում, հատկապես *Սուլուզուլեում*: Նա դարձել է արյունոտ թոնակալի և մեծ դահճի հովանավորն ու պաշտպանը: Նա մի որդ է, որը արևելյան աղայի հետ միասին կրծում է ռայայի ոսկորները: Նա մի գիշերային բու է, մի ուրվական, մի վամպիր, որը դեգերում է գերեզմաններում և սնվում է չունևորների լեշով, բռնի նման ծծում է մարդկային արյունն ու հյութը: Նա Նեղոսի կոկորդիլոս է, որը ապրում է միայն աղքատների արյունով: Նրա համար քրիստոնեությունը մի միջոց է ժողովուրդներին լծելու համար: Նա ծաղրի ենթարկեց Քրիստոսի ուսմունքը, հովանավորելով մի գազազած թոնակալի, իր կեղտոտ անասնական ասիական ուսմունքով: Նա այլակերպեց ամենամեծ դեմոկրատի՝ Գիսուս Քիստոսի կերպարը, որը քարոզում էր եղբայրություն ու ազատություն, համակերպվելով պաշտպանել մի արյունախումբի, մարդկային դիակների մի մսագործի, մի դահիճի, մի թոնակալի, մի անասունի, մի ասիական ալանդակի, մի խավարի ու կեղտոտության պաշտողի, պալատական մի մեծ խուլիգանի:

տառապալների նկատմամբ: Միայն այն ժամանակ հայ ժողովուրդը հստակ տեսավ ոտքերի տակ փռված անդունդը, որը կուլ տվեց նրա աննանավիրական գավակներին, և որը սպառնում էր փակվել իր վրա որպես տապանաքար: Նա զգաց զարթոնքի ոգևորությունը, որը երևան եկավ 1896 թվականի 14(26) օգոստոսի հայտարարությամբ: Այդ թվականից մենք իրավունք ունեինք տեսնելու մեր տառապանքների վերջը: Մենք հուսով էինք, որ հեղված արյունը այլևս բավական է, որ վերջապես գործի է դրվելու տանջահար արված և խղճուկ հիշողության արդյունքը՝ բարենորոգումների ծրագիրը, որով այնպես օրորվում էին հայոց սպասելիքները: Եվ այսպես հոսեց անհանգստությունների ու տառապանքների մի տարի ևս, նոր հուսախաբություններով լի, հալածանքների ու զոհերի մի երկար տարի ևս: Մեզ տրված խոստումները մնացին ձայն բարբարոս անապատի, նույնիսկ փորձեր արվեցին մոռացության տալու հայկական հարցը, ինչ վերաբերում է մեզ, մենք չէինք կարող մոռանալ մեր եղբայրներից հոսած արյունը, ուստի անհնար է այլևս համբերել այս գեհենը: Այսպես ծայրահեղության հասած, մենք նորից հանդես ենք գալիս թատերաբեմ, վճռականորեն կատարելու այն, ինչը հիշեցրինք ձեզ 1896 թվականի 14(26) օգոստոսի իրադարձություններով: *Ի դեպ սա մեր ծրագրի սկիզբն է, որը շատ ավելի սարսափելի է «մեծ մարդասպանի» ծրագրից, ծրագիր, որի միայն հիշողությունը սոսկում է ազդում մեզ:*

Թող այս բավական լինի, ո՞վ եվրոպայի քաղաքակրթված քրիստոնյա ժողովուրդներ: Ինչո՞ւ թողնել, որ կորչի մի ժողովուրդ, որն իր բարոյական ու հոգևոր-մտավոր զարգացման վաղեմությամբ, անհամեմատ բարձր է կանգնած իրեն ապապետականացնող տարրերից:

Գթասրտություն ունեցեք սպանվածների նկատմամբ և նրանց հանդեպ, որոնց գլխավերևում կախված է բռնակալի յաթաղանը: Խղճացեք նրանց, ովքեր



տանջամահ են լինում զնդաններում: Գթացեք այրիներին, որոնք ձեր դուստրերի հետ իրավունք ունեն պահպանելու իրենց պատիվը: Գթացեք որբերին, որոնք ձեր որբերի նման հոր և մոր կարիք ունեն և խղճացեք շղթայված ժողովրդին, որը տնքում է ստրկության ճիրաններում և որը տառապում է Քրիստոսի անունով...: Անօգուտ է թվարկել մեր արդարամիտ պահանջները, որոնք մեկ անգամ չէ, որ հայտնել ենք Ձեզ: Չայի պատիվը չպետք է ոտնակոխ արվի: Այն ամենը, ինչը սուրբ է նրա համար, չպետք է պղծվի: Նրանից չպետք է խլվի տանջալի աշխատանքի արդյունքը: Մենք չենք պահանջում բացի կյանքի, ունեցվածքի և պատվի երաշխավորությունից: Մեր ամբողջ ցանկությունն է, որ ամենուրեք տիրի օրենքը, որտեղ ցարդ իշխել է բռնությունն ու փողոցային ապօրինության բացարձակ կամայականությունը: Մենք չենք ուզում և մենք չենք դադարելու գործելուց, մինչև մեզ տրվի մեր օրինավոր պահանջների լրիվ բավարարություն, սրբագործված մեր տանջված եղբայրների արյունով»:

*Կ. Պոլսի կենտրոնական կոմիտեի կողմից*

\*

\* \*

Որքան որ սարսափելի են մեծ դահճի կոտորածները Արևելյան Եվրոպայում զտնվող տիրույթներում Կ. Պոլսում և արվարձաններում, ինչպես նաև Եգեյան ծովի և Մարմարայի ափերին փռված հայկական բնակավայրերում, և որքան որ անհնար է նկարագրել ասիական ամբողջ վայրագությամբ կատարված այս արյունոտ կոտորածները, նույքան ավելի մռայլ, ավելի սրտակեղեք են մեծ մարդասպանի ասիական տարածքներում, որտեղ ապրում են հայերը, ավելի ճիշտ հայերի հայրենիքում կատարված կոտորածները: Եվ եթե անհնար է անհրաժեշտ մանրամասնությամբ նկարագրել կատարված խժոժությունները օս-

մանյան կայսրության եվրոպայի Բալկանյան երկրներում, անկասկած, առավել անհնար է այդ բանն անել եվրոպական քղթակիցներին, և ընդհանրապես բարի մարդկանց ու մարդասերների զգոն հայացքին անհաղորդ Անատոլիայի չարագործությունների մասին:

Այն ինչ հայտնի է հայերի նկատմամբ ասիական կոտորածների մասին, պարտական ենք այդ վայրերի մի շարք պատվախնդիր հյուպատոսների, այն էլ մի քանի քաղաքների և նրանց մոտերքում գտնվող մեծ գյուղերի, և ոչ թե խուլ վայրերում, որտեղ տիրություն են անում հաստագլուխ քրդերն ու չերքեզները, որոնք ամենայն կամայականությամբ ամայացնում են հայկական գյուղերը, և որոնք իրենց հաճույքի և ասիական սովորությունների թելադրանքով վերաբերվում են հայերի կյանքի, ունեցվածքի ու պատվի հետ:

Գրքի առաջին մասում մենք «Թայմսից» բերեցինք մի թղթակցություն Հայաստանում թուրքական վայրագությունների, կողոպուտի և անպատվությունների մասին, իսկ այստեղ ներկայացնում ենք մի տեղեկություն Եդեսիայի (Ուրֆայի – ծանոթ. թարգմ.) կոտորածի մասին, ըստ "Les Messacres d' Armenie"<sup>1</sup> գրքի ֆրանսիացի հեղինակի:

\*  
\* \* \*

«1896 թվականի հոկտեմբերի 15-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ի մոտերքում, իմացա, որ հայ մեծահարուստ բանկիր Պողոսը, եկեղեցու փողոցում հարձակման է ենթարկվել թուրքերի կողմից, որոնք յաթաղանի հինգ հարված են հասցրել նրան: Հարձակվողների գլխավորը եղել է անօրեն թուրք՝ Բիրեջիկցին: Մի քանի համարձակ երիտասարդ հայերի

---

<sup>1</sup> "Les Messacres d' Armenie" - «Կոտորածները Հայաստանում» գրքի ֆրանսիացի հեղինակը ճշված թվականին գտնվել է Եդեսիայում և ականատես եղել իր նկարագրած դեպքերին:

հաջողվել է բռնել այս Բիրեջիկին, ավագակին և տարել են եկեղեցու դիմաց գտնվող ոստիկանական տեղաձաս, իսկ նրա ընկեր-ձասնակիցները փախել են: Տասնհինգ ռուպե անց բանկիր Պողոսը մահանում է: Հետո պարզվեց, որ Բիրեջիկցին է կատարել այս սպանությունը՝ մի նավապետ կապիտանի ցուցմունքով: Պահակատան գինվորները սրերով խոցեցին սպանողին և փոխադրեցին ոստիկանատուն, որտեղ քաղաքապետին հայտնեցին, որ «Բիրեջիկցու մարմինը խլեցին գյավուրների ձեռքից»: Այդ օրը մինչև գիշեր քաղաքը մեծ հուզմունքի մեջ էր: Թուրքերը փողոցներում գոռում էին, որ կոտորելու են բոլոր հայերին, ինչպես որ նրանց հետ արեցին Մարաշ քաղաքի մուսուլմանները: Կես գիշերին լսվեցին շուրջ քսան հրացանների կրակոցներ, կես ժամ հետո լսվեց ևս տասնհինգ կրակոց: Առավոտյան քաղաքով մեկ պատմում էին, որ գիշերը հայերը փորձել են կոտորել թուրքերին, բայց չի հաջողվել: Երկուշաբթի առավոտյան թուրքերը գնացին շուկա և սկսեցին ծեծել հայերին: Այս վերջինները փակեցին խանութները և փախան իրենց տները: Թուրքերը ջարդեցին հայերի խանութների ու կրպակների դռները, որտեղ հրացաններ էին վաճառվում: Թալանեցին այն ամենը ինչ կար այնտեղ և բռնավում էին փողոցներում. «Կոտորելու ենք բոլոր հայերին հենց իրենց զենքերով, փառք Մուհամեդին»: Դրանից հետո նորից սկսեցին դեռևս չթալանված մի քանի խանութների դռները ջարդել: Ոստիկանները փոխանակ նրանց ցրելու ոգևորում էին ալ-դուրանից տեքստեր կարդալով: Անմիջապես հայերի բոլոր խանութներն ու կրպակները թալանվեցին: Զինվորները վերցնում էին ամենալավ ապրանքներն ու փողերը, իսկ մնացածը տանում էր ամբոխը, որը նշանակալի թիվ էր կազմում: Իսկ երեկոյան ամբոխը օրը ցերեկով ջարդում էր խանութների դռները, առանց դյուզն իսկ խղճի խայթի (թուրքի մոտ խիղճ, ոնց որ խոզի վզին ապարանջան) և գոռում էին «փառք Մուհամեդին»: Նրանց մեջ կային

երգեցիկ կանայք, որոնք դմբացնում էին դահիրենները և պարում էին պորտապար և ցատկոտում ինչպես հարսանիքում: Ես նայում էի այս գզվելի տեսարանին հյուրանոցի պատուհանից, որտեղ իջևանել էի: Այդ ժամանակ ներկայացավ Հասան փաշան, որը ամբոխի մեջ կանգնած բղավում էր. «Ապա, սիրելիներս, ձեզ տրվում է քսանութ ժամ, որպեսզի մորթեք քաղաքի բոլոր գյավուրներին և նրանց ամբողջ հարստությունը թալանեք»: Ամբոխը շնորհակալ եղավ փաշային, և շարունակեց իր գործը՝ թալանը: Մի կապիտան մոտեցավ փաշային և մի կողմ հրավիրեց նրան, մի որոշ ժամանակ խոսեց նրա հետ, ապա հրամայեց զինվորներին դադարեցնել կողոպուտը և ամբոխը ցրել: «Հայդե, - կանչում էր նա, - գնացեք գյավուրների թաղը, մորթեք բոլորին և թալանեք նրանց»: Վերջում զինվորները թողեցին թալանը և համոզեցին ամբոխին՝ դուրս գալ շուկայից: Այնժամ բոլորը գնացին հայոց թաղը: Մի ուժգին ճիչ ցույց տվեց նրանց ներկայությունը այնտեղ, քանի որ նրանք անընդհատ կանչում էին՝ «Փառք Սուհամեդին», իսկ որոշ կանայք ընկերակցում էին նրանց՝ դահիրենների հնչյունների տակ: Թալանը տևեց տասը ժամ: Հետո նրանք հարձակվեցին հայոց թաղի վրա, որտեղ սկսեցին կացիներով ջարդել տների դրսի դռները: Մորթում էին այնտեղ գտնվող մարդկանց և կողոպտում ամեն ինչ, նույնիսկ պարենը և տնական մանր-մունր իրերը: Բայց թե թաղի մեջտեղում, որտեղ հայերի տները հասնում էին 4000-ի, բնակիչներին հաջողվեց համախմբվել և ետ մղել զորքերի ու բաշիբոզուկների հարձակումները: Վայրի տականքները անհաջողությունից գազազած, սոսկալի աղաղակներով վերադարձան շուկա ու շարունակեցին թալանել խանութները: Այդ օրը միայն 80 խանութ մնացին չթալանված, մյուս 1800-ը կատարելապես կողոպտված էին, այնպես էլ թալանված էին 300 տներ: Այդ օրը կային 177 մահացածներ և 58 հոգի ծանր վիրավորներ՝ բաշիբոզուկների գազազած ամբոխից: Երեկոյան երբ

մութն ընկավ, գիշերը վերջ տվեց թալանին ու սպանություններին: Հայերը վախեցած ամբողջ գիշեր հրսկում էին, իսկ թուրքերը այդ օրվանից երջանիկ, հանգիստ քնում էին: Սակայն փողոցներում մարդասպանների կատաղությունը դեռ չէր անցել: Գիշերը, հյուրանոցի փոքրիկ պատուհանից նկատեցինք հեծյալների մի կապիտանի, մի քուկատ զինվորների ընկերակցությամբ, իրենց հետ բերում էին դեղագործ Մելքոնին և մի քանի ուրիշ հայերի: Նրանք գնում էին դեպի Ղոնախ: Դրանից հետո չանցավ 5 րոպե, լսվեց 4-5 հրացանների կրակոց և թուրքերը փողոցներում բղավում էին: «Զինվորները երեք հայեր սպանեցին»: Եվ որովհետև դեղագործ Մելքոնը երկու օր առաջ վկայել էր, որ Բիրեջիկցին սրով խոցված էր, նպատակահարմար գտնվեց անհետացնել նրան, որպես վտանգավոր վկա: Նրա մոտ ուղարկեցին զինվորներ, որոնք ասեցին նրան. «Ե՛կ, վալին հիվանդ է, քո կարիքն ունի»: Դեղագործի երկու բարեկամները կասկածեցին այս հրավերի վրա ու ուզեցին ընկերակցել նրան: Նրանք զոհ դարձան իրենց նվիրվածությանը: Երեքն էլ սպանվել էին: Պարանով կապել էին ոտքերից և նրանց զցել էին գառիթափից ներքև, որը Կարակոյին էր կոչվում, 360 մետր խորությամբ, որտեղ սովորաբար քաղաքի աղբն էին թափում: Ցավոք թուրքերը դեռ չէին հագեցել: Այսպիսով, երեքշաբթի օրը կառավարությունը հավաքեց բոլոր ավագակներին՝ քրդերին, գեյբեկներին և ֆելլահներին: Նրանց բաժանեց տարատեսակ զենքեր՝ հրացաններ, թրեր, թիեր և այլն: Այնուհետև բոլորին, մինչև վերջինը, ուղարկեց հայոց թաղը: Հայերը զուր տեղը կանչում, աղերսում էին. «Մենք կառավարության հավատարիմ հպատակներ ենք, միշտ էլ վճարել ենք մեր հարկերը: Խնայեցեք մեզ»: Ավագակներից կազմված այդ հորդան, մեծ մասամբ մերկ, կեղտոտ շորերով, ավելի ճիշտը՝ քուրջերով ծածկված, մոլլաների և սոֆտաների առաջնորդությամբ ուղղվեց դեպի հայոց թաղը:

Նրանք ջանում էին նույնիսկ գիշերվա ժամը 11-ին մտնել հայոց թաղը, բայց դա նրանց չհաջողվեց, քանզի հայերը հավաքված էին և դիմադրում էին բավականին քաջաբար: Տեղի ունեցավ փամփուշտների զուր վատնում: Այդ օրը կարողացան միայն 150 տուն թալանել և սպանել 20 հայեր: Թուրքերից ընկան միայն 2 հոգի և մեկ վիրավոր: Թուրքերը կրկին վերադարձան՝ չափազանց զայրացած ու կատաղած իրենց կրած անհաջողություններից: Այն ժամանակ նրանք հասկացան, որ հեշտությամբ չեն հասնելու իրենց նպատակին, քանի որ հայերը զինված էին: Ստածեցին դիմել ուրիշ միջոցների: Ջինվորներով պաշարեցին ամբողջ հայկական թաղը: Նրան թույլ չէին տալիս հայթայթել ոչ սնունդ, ոչ զարի և կամ ոչ էլ նույնիսկ հարդ: Արդեն սպանված էին հացի փոերում, կամ քաղաքի ջրաղացներում աշխատող սասունցիները: *Առևանգվեցին և բռնորոպին մերկ գորանոցներ բերվեցին նրանց կանայք ու դուստրերը: Հինգ օր նրանց տանջելուց և պատվազրկելուց հետո բաց թողեցին իրենց տները: Բռնորը համոզված էին, որ անհավատ կնոջ անպատվելը կամ մի գյավուր տանջելը Ալլահին և նրա մարգարե Մուհամեդին ամենահաճելի գործ է, որ անհավատների ունեցվածքն ու փողերը պատկանում են մուսուլմաններին, և բռնորը կատաղած փողոցներում բղավում էին. «Եթե մինչև վերջին հայ գյավուրին, այս ապստամբ, գող ու ավազակներին, այս շներին չսպանենք, երբեք չենք տեսնի դրախտը, փա՛ռք Մուհամեդին...»*

Չորեքշաբթի օրը կառավարությունը կանչեց հայ զլխավորներին և բանտարկեց: Նրանց ասացին. «Դուք ունեք հեղափոխական կոմիտե, տվեք նրանց անդամների անունները: Դուք ունեք 1800 մարտինի հրացաններ, հանձներ դրանք»: Հայերը պատասխանեցին, թե ոչինչ չունեն, բացի սովորական կավալե զենքերից: Հասան փաշան և նահանգապետը եկան բանտ և հայ մեծամեծներից պահանջեցին փողի հըս-

կայական գունարներ, հակառակ դեպքում սպառնացին, թե եթե մերժեն, կկախեն բոլորին: Խեղճ մարդիկ, ինչ որ ունեին տվեցին, տոկոսով էլ վերցրին հազարական լիրա և այն ևս տվեցին քաղցած ավազակներին: Նրանց իբր բանտից բաց էին թաղնելու, բայց բոլորին խեղդամահ արեցին: Հետո կանչեցին քահանաներին և ասացին. «Եթե ուզում եք ձերոնց թույլատրվի բացել իրենց խանութները և նայել իրենց գործին՝ հանձնեք ձեր բոլոր զենքերը»: Քահանաները ևս պատասխանեցին, ինչպես իրենց մեծավորները: Այնժամ գինվորները մի քանի հրանոթներ և մի քանի հարյուր նռնակներ բերեցին քաղաքի բարձունքը, որը վերահսկում էր քաղաքը, մանավանդ հայոց թաղը և սպառնացին, թե բոլորին կկոտորեն և կայրեն, եթե հայերը չհանձնեն իրենց զենքերը: Հայերը նորից պատասխանեցին, որ ունեն միայն սովորական հրացաններ. «Բերե՛ք», ասացին նրանք. «Վախենում ենք, պատասխանեցին հայերը, որ կոտորածները նորից կսկսվեն, իսկ մենք զենք պետք է ունենանք, որպեսզի պաշտպանվենք»: Նահանգապետը խրախուսեց նրանց, ասելով. «Եթե հանձնեք բոլոր զենքերը, խոստանում եմ ձեզ իմ հովանավորությունը: Մի վախենաք...»: Խեղճ ժողովուրդը խարվեց իր ոչխարային պարզամտությամբ: Մի քանի հայեր ընկան տները և հավաքեցին զենքերը ու հանձնեցին կառավարությանը: «Էլի ունեք, դրանք էլ բերեք», - ասաց նահանգապետը: Քահանաներին ուղարկեցին տները, որպեսզի երդվեցնեն մարդկանց, որ այլևս զենք չունեն: Այսպիսով հավաքվեց ամբողջ զենքը, որից հետո քահանաները գնացին քաղաքապետարան, երդում տվեցին, որ հայերի մոտ, իրավամբ, ոչ մի զենք չկա: Այսպես անցավ մինչև նույն տարվա 21 նոյեմբերը, երբ լսեցինք հրացանի տասնյակ կրակոցներ: Այդ սարսափելի վախեցրեց մեզ: Դրանից հետո թուրք էմիրը, ծնված Այնթապում, որը հետևակային զորքի կապիտանի բարեկամն էր, եկավ մեզ մոտ և պատմեց, որ սպառնում են հայ թորոսին, որ կսպանեն

իրեն և ընտանիքի բոլոր անդամներին, և փրկել իրեն և հարազատներին՝ նահանգապետին վճարելով երկու հազար լիրա, որը վճարելով ներում է ստացել, բայց փոխանակ փողոցում մորթվելու, զնդան են նետել:

Ձինվորները զենք գտնելու հույսով մտան բազում տներ, փորփրեցին բակերը, նկուղները, բացեցին եկեղեցու գերեզմանները, բայց ոչինչ չգտան: Գիշերը, որտեղ լույս էին նկատում, նշան էին բռնում և կրակում: 48 օր շարունակ, 16 հոկտեմբերից մինչև դեկտեմբերի 2-ը, հայերը գտնվում էին իսկական պատերազմական վիճակում: Դեկտեմբերի 3-ին արգելքը վերացավ և հայերին հրաման տրվեց շուկայում իրենց գործերով զբաղվելու: Նրանք, ովքեր համարձակություն ունեցան զնալու, տեսնելով որ ամեն ինչ թալանված ու ջարդված է, թունավորվածների նման տուն վերադարձան: Պաշարման դրության և կոտորածների ժամանակ զինվորները թալանել էին ամեն ինչ:

Հիմա թուրքերը այլևս հրաժարվում էին իրենց պարտքերը տալու հայերին, իսկ նրանց ստիպում էին, թեկուզև թալանված՝ վճարելու իրենց պարտքերը: Եվ եթե հայերը ոչինչ չունեին տալու, նրանցից և նրանց կանանցից ու երեխաներից հանում տանում էին նրանց հագուստները: Հայերը հուսահատ՝ այլևս ոչինչ չէին ուզում, բացի մահից: Թուրքերը քաղաքից դուրս եկան և խորհուրդ անելով որոշեցին այս անգամ կատարել իրենց դաժան մտադրությունը դժոխային ձևով, քանի որ հայերը հաց կտրելու փոքրիկ դանակ իսկ չունեին:

Շաբաթ օրը, դեկտեմբերի 16-ին, լուր տարածվեց, որ թուրքերը հարձակվելու են հայերի վրա: Քահանաները և մեծամեծներից շատերը գնացին ղոնախ և պահանջեցին, որ կատարեն հայերին հովանավորելու իրենց խոստումը: Քաղաքապետը վերադարձրեց նրանց ասելով. «Գնացեք, ոչ մի բանից մի վախեցեք: Ես զինվորներ եմ ուղարկելու, որ պահպանեն ձեր թաղը»: Իրավամբ նա ուղարկեց 3000 զինվոր կանոնա-



վոր գորքից և 1500 զինվոր «համիդիե» զնդից, որոնք պաշարեցին հայոց թաղը: Նրանցից շատերը մտան թաղամաս, բարձրացան տանիքները և պատրաստվեցին հարձակման: Նրանք փողոցից անցնող թուրքերին կանչում էին. «Գնացեք դոնախ, այնտեղ զենք են բաժանում»: Անցորդ թուրքերը հետևում էին նրանց խորհրդին և մեծ թվով ելուզակներ ու գողեր ուրախ շարժվեցին դեպի դոնախ: Հազիվ կես ժամ անցավ, մի բազմամարդ ամբոխ, զինված հրացաններով, թիերով ու երկաթե մահակներով փողոց թափվեցին՝ դահիրեների և «փառք Մուհամեդին» բղավոցների տակ: Սկսեցին հարձակվել տների վրա ամենայն դաժանությամբ ու կատաղությամբ, և վայրի գոռոցներով գրգռում էին ամբոխը իրենց զինվորների շեփորների աղմուկով: Հայերը չէին իմանում ինչ անեն: Նրանք ոչ մի դանակ չունեին, որ դրանցով պաշտպանվեին: Լաց էին լինում և պահվում տների ծակուռներում ու եկեղեցիներում: Աղաչում էին Աստծուն, որ կատաղած թուրքերին գթասրբություն պարզվի: Իսկ թուրքերը սկսեցին թիերով ու երկաթե մահակներով ջարդել դարպասները: Նրանք սպանում, մորթում էին, և կտոր կտոր անում այն ամենը ինչ ձեռքներն էր ընկնում: Նրանք չէին նայում ծերունի է, կին է թե տղամարդ: Նրանք ճեղքում էին պատճառավոր կանանց արգանդը, նորածիններին հանում ցցերին: Նրանք տնտղում էին հարուստ կանանց, տանջում և սպանում ամբողջ ընտանիքով: Չարագործություններ, անպատվություններ և դաժանություններ, որ կատարում էին այս բարբարոսները անհամար են, աննկարագրելի: Նրանք անպատվեցին մեծ թվով կանանց, բազում աղջիկների՝ իրենց անուսիներին և հայրերի աչքի առաջ, հետո սպանում երկար ու անտանելի տանջանքներով, բղավելով «փառք Մուհամեդին»: Ասիական արվեստով ու արհեստով, բնորոշ միայն գազազած թուրքին, մի դաժանությամբ՝ բնական միայն Մուհամեդի հետևորդներին, նրանք ջարդում էին երեխաներին՝ ծնողների աչքի առաջ,

և մեծագույն հաճույք զգում լսելով նրանց աղերսանքները, որոնց տանջում էին, որպեսզի ավելի շուտ վերջ տրվի նրանց կյանքին:

Հայերը բավականին ջանում էին հակադրվել, բայց նրանց ուժերը անբավարար էին այս թշնամական տականքների դեմ, և որոնք միանգամայն ճնշվեցին անբողջովին: Նրանց ընդդիմադիր ջանքերը ծառայում էին հարձակումները սաստկացնելու համար: Ավելին, որքան որ հայերը բազմաթիվ էին, այնքան թուրքերը, չնայած իրենց բազմաքանակությանը, չէին կարողանում ավելի շատ կոտորել նրանց: Վրա հասած գիշերը դադարեցրեց կոտորածը: Կիրակի առավոտյան, արշալույսին, նորից լսվեցին շեփորների ձայներ և ամբոխը նորից վերադարձավ հայկական թաղամասը: Նորից սկսվեց ջարդը, և արյունը հոսում էր ջրի պես, որը ներկել էր փողոցները, տները, կրպակները...: Եվ ոչ մի տեղից ոչ մի օգնություն, ոչ մի գթասրտություն չեկավ ամոքելու խեղճ հայերի տանջանքները: *Մայրերը նետվում էին մարդասպանների ոտքերի առջև, որոնք հարձակվում էին երեխաների, քույրերի, եղբայրների, ամուսինների վրա, չնայած նրանց առջև թափված էին իրենց ունեցած անբողջ փողը, մինչ այդ թաքցրած թանկարժեք իրերը: Աղերսում էին, որ վերցնեն իրենց անբողջ ունեցածը, միայն թե իրենց կյանքը խնայեն, սակայն, խեղճ կանայք ոտնահարվում էին մարդկային կերպարանքով այս գազանների կողմից, որոնք թրոնում էին նրանց դիակների վրայով, որպեսզի հասնեն ընտանիքի մյուս անդամների, դրանց ևս կոտորելու համար.*

Երեկոյան ամբոխը մոտեցավ եկեղեցուն, որտեղ թաքնված էին շուրջ 3000 հայեր: Թուրքերը կես ժամվա ընթացքում ջարդեցին դուռը և ներս ներխուժեցին, կանչելով. «Փառք Մուհամեդին»: Տեսնելով այստեղ թաքնված հայերի բազմությունը, մտածեցին, որ չարժի ժամանակ վատնել նրանց բոլորին մեկ մեկ մորթելու համար, ուստի *բերեցին 16 սնդուկ նավթ,*

այն թափեցին շուրջ բոլորը ու եկեղեցու վրա, որը անմիջապես բողափառվեց ամեն կողմից: Երեք հազար հոգի կենդանի այրվեցին: Նրանք ողբեր փորձեցին փախչել, դաժանորեն ջարդվեցին գազազած ամբոխից: Այս բոլոր տանջանքներից միայն մեկ հոգի փրկվեց, այն ևս շատ տեղից վիրավոր, երեք օր շարունակ թաքնված մնալով այրված դիակների տակ:

Քաղաքի հայերի հոգևոր առաջնորդ, միտրոպոլիտ Խորեն Մեկտերյանը բարձրացել էր առաջնորդարանի տանիքը, և այնտեղից դիտելով այդ սարսափելի տեսարանները, խենթանալու աստիճան հուզվել էր և երեխայի նման լաց եղել: Նա հուսահատ քաշվել է իր սենյակը, երակները կտրել և գրիչը թաթախելով արյան մեջ քաղաքապետին գրել հետևյալ նամակը. «Քանի որ մորթեցիք իմ ժողովրդին, ես որպես նրա հովիվը, իրավունք չունեմ նրանից երկար ապրելու: Ես գնում եմ այն աշխարհը՝ միանալու նրանց: Այս գազանությունների ու բռնությունների, այսքան արյուն թափվելու պատճառը դու ես: Եվ քանի որ աշխարհում ոչ ոք չկա, որ պաշտպանի իմ ժողովրդին, ես նրան վստահում եմ Աստծուն, որը թույլերի և անմեղների պաշտպանն է...»: Վարդապետը սիրված ու հարգված էր նույնիսկ թուրքերից, որպես գիտուն և բնավորության տեր մարդ: Հրաշքով, չնայած իր գազանային բնավորությանը, քաղաքապետը շփոթվել է այս նամակից և անսալով մի քանի թուրք մեծամեծների խորհրդին, նա վարդապետի մոտ ուղարկեց մի քանի բժիշկների, որոնք ժամանակին վրա հասան և մահից փրկեցին նրան: Նա համարյա հաշմանդամ է և դեռևս ապրում է և անիծում իրեն, որ իր ժողովրդից երկար է ապրում:

Թուրքերը շարունակում էին իրենց չարագործությունները նույնիսկ գիշերը, նրանք ոչ ոքի չխնայեցին: Նրանք թալանեցին բոլոր եկեղեցիները, տները, այգիները ու սպանեցին բոլոր հայերին, ողջ թողնելով միայն մի քանի երեխաներ և տատիկներ, որոնք կիսա-

մերկ ու արյունոտ շորերով դեգերում էին փողոցներում: Հետո, երևում է մուսուլմանական պատվախրնորությունից ճղված, նրանց հավաքեցին ճվկիթներում ու զորանոցներում: Ցինիզմը հասնում էր իր գագաթնակետին: Մահմեդ չաուշը, որն ուղարկվել էր վարդապետ Մեկտերյանի մոտ, որ նրա տունը պահպանի ամբոխի հարձակումներից, անպատվեց այն աղջիկներին, որոնք փախել էին առաջնորդարան, թաքնվելու համար:

Ձոհվածների թիվը պետք է հասած լինի 15000-ի: Վերապրողները, ծանր վիրավորները և հաշմանդամները մեռնում են օրական 20-25 հոգի: Չմնաց այլևս ոչինչ, ոչ ժողովուրդ, ոչ հովիվ: Ութ քահանաներից ողջ մնաց միայն մեկը: Բողոքականների քարոզիչը կտոր կտոր էր արվել, որի մսի կտորտանքները ցրված էին փողոցում, որովհետև շներն անգամ այլևս կուշտ էին մարդկային միս ուտելուց: Ողջ մնացածները խրված էին չքավորության մեջ, իսկ դահիճները դեռ չէին հագեցել: *Պատվարժան մարդիկ լռել էին, որ գիշերները խոսում են, որ անհրաժեշտ էր վեց ժամ ևս կոտորած, ճշտությամբ կատարած լինելու համար սուլթանի սրբազան հրամանը և ի փառք Մուհամեդի:* Նրանք պետք է մորթեին վիրավորներին ևս:

Ես այս քաղաքն էի եկել իմ առևտրական գործերով և այսպես ականա վկա եղա այս սոսկալի դեպքերին: Ես տեսա, թե ինչ է նշանակում թուրքական ֆանատիզմը և թուրքական չարագործությունը: Հենց որ կոտորածը դադարեց և մի հարաբերական կարգ ու կանոն վերականգնվեց, ես ծպտվեցի թուրքական շորերով, և քանի որ քաղաքում ոչ ոք չէր ճանաչում ինձ, հաջողվեց այն թողնել առանց վնասվելու:

Գնացի Բիրեջիկ, որտեղ գտա նույն իրավիճակը: Միևնույն ահավոր գործերը կատարվեցին նաև այստեղ՝ միևնույն պայմաններում: Այստեղ ևս առաջին հերթին սկսել են հայերից հավաքել զենքը: Դրանից հետո նրանց մորթել են հորթերի նման: Բիրեջիկում

կոտորածների թիվը հասնում է 3800-ի: Ահավասիկ մի տիպիկ փաստ, որն ինձ պատմեցին:

Թուրքերը հարձակվեցին մի հայազգի Կարապետի տան վրա, որպեսզի առևանգեն նրա աղջկան, միակը գեղեցկությամբ ամբողջ քաղաքում: Խեղճ աղջիկը, վախեցած իրեն վիճակված սոսկալի ճակատագրից, իրեն գցում է ջրհորը, որտեղ և մահանում է: Թուրքերը տան մեջ գտնվողներին բոլորին մորթել են, հետո *ջրհորից հանել են աղջկա դիակը ու ենթարկել անասնական անպատվության*: Եվ երբ աղջկա դիակի հետ կատարում էին ամենազզվելի անամոթություններ, կանչում էին «փառք Սուհամեդին»: Եվ նրանք ամենուրեք պատմում էին իրենց հերոսության մասին և հպարտանում դրանով:

Բիրեջիկից գնացի Այնթապ, որտեղ նորից տեսա նույն պատկերները: Այստեղ կոտորածների թիվը ավելի քիչ չէ: Շուկան փակ էր: Ողջ մնացած հայերը փակվել էին իրենց տներում, իսկ թուրքերն այնտեղ վաճառում էին իրենց գողունը և կանչում. «*Չենք թողնելու ոչ մի գյավուր: Կտեսներ: Սպասում ենք փաղիշախի նոր հրամանին, որպեսզի կոտորենք Այնթապի բոլոր հայերին*»:

Ադիյամանից, Սևերեկից, Գուրուկից, Դերենտեներից եկող ուղևորները պատմում էին սոսկալի բաներ. «*Մենք վերցրինք հայոց զենքերը և թալանեցինք ունեցվածքը, առևանգեցինք կանանց ու աղջիկներին և շատ գոհ ենք: Փառք Սուհամեդին*»: Ամիսներ ու տարիներ են պետք, նկարագրելու համար այն ամենը ինչ տեսել ու լսել ենք թուրքերի կոտորածների, կողոպուտների, չարագործությունների և անպատվությունների մասին: Բացի այդ մարդ պետք է հանգիստ լինի, համարձակ, ամուր ջղերով...: Հայոց մեծամեծներն, հարուստներն ու որոշ քահանաներ, որոնց հաջողվել է խուսափել կոտորածներից այն քաղաքներում, որտեղ տեղի ունեցան ջարդերն ու թալանը, հիմա գցված են զնդաններում: Դրանք ավելի քան 800

հոգի են: Հայերին թույլ չի տրվում գնալ արտասահման, իսկ թուրքերը ազատ շրջում են և վաճառում նրանցից գողացած ապրանքը: Գազանային կոտորածներից, անօրինակ ու աննկարագրելի դաժանություններից հետո, հիմա գալիս են կատարված անարդարության նուպաները:

Ավարտում են այս փաստերի շարքը հետևյալ եզրակացությամբ, ինչքան հնարավոր է շուտ կիրառվեն բարենորոգումները, անհրաժեշտ բարեփոխումները, որպեսզի հանդարտվի հայ ժողովուրդը: Ավազակային օսմանյան կառավարությունը և «մեծ դահիճը» երբեք չեն անելու այդ: Պետք է որ ինքը եվրոպան անի այդ բանը՝ եռանդագին միջամտելով: Հակառակ դեպքում կորչելու է այս ժողովուրդը: Թող Աստված գթա այս խեղճ հայազգի ռայայի վրա...»:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

### ԹՈՒՐԷՐԻ ԼՈՐ ԳԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱԿԵՂՆԻԱՅՈՒՄ

Ճիշտ այն օրերին, երբ պրն. Ստոիլովը կառավարության քննանքով ու պարսկական մանկլավիկությամբ մարզանք էր կատարում սուլթանի և նրա աղաների առջև, երբ զգվելի մի փախատական և ողորմածությամբ ու հովերի բերումով դարձել էր արդարադատության նախարար և բուլղար քաղաքացիներին դատում էր նրա համար, որ ձեռ են առնում անենաողորմած անձին, հանձին ներկայիս անենամեծ բռնակալին ու հանցագործին, երբ Սոֆիայի և շնական Ստամբուլի միջև ամեն օր դեգերում են տարատեսակ գործակալներ՝ տանելու և հանձնելու համար *օսմանիեներ, մեքիդիեներ* և նման *աղքատիկ նվերներ*: Ճիշտ այդ ժամանակ անգրլուխ բռնակալը Մակեդոնիայում մորթում ու անպատվում էր մեր եղբայրներին և ո՛վ խայտառակություն, գտնվեց մի բուլղարական կառավարություն, որը պաշտպանի թուրքերին, հավաստելով, թե Մակեդո-

նիայում կոտորածներ չեն եղել: Այդպես չի կարող պատահել, ընդհակառակը, կամ ներկայիս բուլղարական կառավարությունը բուլղարական չէ, այլ ինչ որ բյուզանդական - բեսարաբական – լեվանդական է, պրն. Ստոիլովը, կամ ինչպես Պլովդիվում են նրան կոչում՝ Հաջի Անտոն օղլու, այն բանից հետո, երբ Մակեդոնիայի բուլղարներին հանձնեց սերբ շովինիստներին և կապսումանյան սերբ առաջնորդներին, հիմա ձեռներն են շփում Սոֆիայում թուրքական կոմիսարի հետ, որ հյուսիսային Մակեդոնիան այրվում է կրակներում: Մենք խնդրում ենք, մենք հրավիրում ենք պրն. Ստոիլովին, թողնել այդ դավաճանական քաղաքականությունը, առանց մտածելու, թե ինչ կասի *ուղղափառ Ռուսաստանը*, քանզի գալու է հաշվեհարդարի մի այնպիսի օր, որի համար շատ է զղջալու պրն. Ստոիլովը:

Որ թուրքերն ունեն «Արբազան ուխտ» և միշտ երազում են կոտորել պետության մեջ ապրող բոլոր քրիստոնյաներին, այնպիսի ճշմարտություն է, որ միայն կույրերն ու խուլերն չեն ուզում հավատալ: Այդ «գաղտնի սրբազան ընկերության» նախագահն ու առաջնորդը, ինքը՝ սուլթանն է, որը տարեկան հազարավոր լիրաներ է մսխում մուսուլմանների մեջ այս քարոզիչներին՝ Սիրիայում, Հնդկաստանում, Պարսկաստանում, Ալժիրում և այլուր:

Այս իրողությունը հաստատվում է հայերին կոտորելու մեջ: Այսպիսի կոտորածներին բացահայտորեն խառն է Ստամբուլի սատրապի հզոր մատը, որը ղեկավարվում է նրա կողմից: Որ մակեդոնիացիների կոտորածը ծրագրվում էր շատ վաղուց, այդ մենք գիտեինք: Դեռ 1895-ից այստեղ քարոզվում էր տարատեսակ բորիկ, կանաչ չալմայակիր բնակչության մեջ՝ *զյավուրներին մորթելը, իսկ առաջին հերթին բուլղարներին*. Իսկ Մակեդոնիայում առանձին բուլղարների մորթելն ու անպատվելը դեռ չի դադարել, քանի ազատագրված է այսօրվա Բուլղարիան: Կոտորածներն ու անմեղ մարդկանց ոչնչացումն ամենից սովորական

երևույթ է Մակեդոնիայում: Չնայած այն բանին, որ թուրքերը առանց մարդկային զոհերի չեն կարող յուր գնալ: Եվ եթե մի սուլթան Աբդուլ Չամիդ հրամայում է Կ. Պոլսի հայերին կոտորելը, այն ևս եվրոպական դեսպանների աչքի առաջ, այդ ի՞նչն է խանգարում Չաֆրզ փաշային նույն բանն անել Ակոպիեյի<sup>1</sup> վիլայեթում: Եվ միթե Ակոպիեյի վալին չի պարզևատրվելու մի «աֆերիմով», ոչնչացնելով մի քանի հարյուր բուլղարների: Ալ-դուրանով արգելվում է շանը սպանելը, իսկ մի քանի հարյուր գյավուր շներին, այսինքն քրիստոնյաների սպանելը, տանջելն ու անպատվելն արժանի չէ դրվատանքի և վարձատրվում է «վերևից»՝ Մուհամեդից: Չաֆրզ փաշան իսկական մուսուլման է և դեռ արժանացել է Բեգթաշի<sup>2</sup> շքանշանի և Մուհամեդի սրբազան մազով, որը պահպանվում է Կ. Պոլսի էյուբ մզկիթում: Չետևաբար Չաֆրզ փաշան գտնվում է նույն ինքը՝ Ստամբուլի սուլթանի բարձր հովանավորության տակ, որը Մուհամեդի երկրային ներկայացուցիչն է: Եթե փաշան չլիներ Բեգթաշիների սուլթանի հոգևոր որդին և «սրբազան ուխտի» անդամ, նրա անօրինականություններն ու քրոական բնույթը չէր հասնի այդպիսի խայտառակ ցինիկության, որպեսզի բուլղար ժողովրդին անվանի՝ վալիական գահից սերված: «*Պուք կեդտոտ ժողովուրդ եք*»: Այսպես է գնահատել մի ամբողջ ժողովուրդ, մեկ ու կես միլիոն բնակչությամբ, այն էլ միայն չալմայակրի հավատարիմ հպատակներին: Դին-իսլամի ամենից ահավոր խայտառակությունն է և մի նախաբան՝ բուլղարների գալիք կոտորածների համար: Որ այդ այդպես է, երևում է վերջերս Մակեդոնիայում բուլղարների հանդեպ սանձազերծված թուրքական գազանություններից ու կատաղություններից: Եվ ինչքան քայքայվում է այդ մուլեռանդ ասիական պե-

<sup>1</sup> Ակոպիե - Մակեդոնիայի երբեմնի գլխավոր քաղաքը, այժմ նույնանուն հանրապետության մայրաքաղաքը:

<sup>2</sup> Բեգթաշի շքանշան – սուլթանի բարձրագույն պարգևներից:



տութիւնը, այնքան կոտորածները լինելու են ավելի հաճախ, ավելի ահապոր ու ավելի վայրագ:

Մակեդոնացիները դեռ պետք է սպասեն զլխավոր կոտորածների, որի համար և պետք է նախապատրաստվեն, եթե չեն ուզում մեռնել զուր տեղը՝ անասունների պես:

Միանգամայն պարզ է, որ կոտորածները, որոնք տեղի ունեցան Քոչանիում, Շտիպի, Մալաշկի, Սկոպիեյի և այլ մարզերում, առաջինները չեն, ոչ էլ վերջիններն են լինելու: Քսան տարուց ի վեր, մակեդոնական բուլղարները ենթարկվում են թուրքական անասելի հալածանքներին: Քսան տարի: Դա ասիական-պարսկական տառապանքների, կոտորածների, կախաղանների, խեղդամահ արվածների, ցցի վրա հանվածների, զնդաններում փտելու մի շղթա է, առավելապես Սելանիկի *արյունոտ թերթ* կոչվող բանտում: Հազարավոր մակեդոնական բուլղարներ, ոչ մի հանցանքի համար, Միջագետքի վալի քոռ Հասան փաշայի լրիվ իշխանության ու տրամադրության տակ ուղարկվում են անատոլիական վայրի անապատներում ապրելու: Նախկին գազան, սելանիկի վալի Ջահնի փաշան, լրտեսական մի տեղեկության համաձայն, առանց դատուղատատանի, վարչական կարգով, բազմաթիվ բուլղարների ուղարկել է աքսորի: Ինչի՞ համար է այս ամենը: Բուլղարների ազատագրությունից հետո (1878) առաջին տարիներին, մակեդոնացիներին եկեղացական խընդիրներից բացի ուրիշ ոչինչ չէր հետաքրքրում: Նրա՞ համար, որ չուրացան իրենց ազգությունը, լեզուն ու հավատը: Նրանք դարձան Կ. Պոլսի ապուշների աչքի փուշը: Եվ դեռ գտնվում են անտաշ ու շփոթված բուլղարներ, որոնք չեն ընդունում մակեդոնական բուլղարների հաստատակամությունն ու ճկունությունը:

\*

\* \*

Քսան տարի է ինչ ծանր է մակեդոնական բուլ-

ղարների ճակատագիրը: Քսան տարի է, որ մակեդոնական բուլղարը ենթարկված է թուրքական անզուսպ յաթաղանին ու կործանման: Դա թուրքական անօրինությունների ու հանցագործությունների մի անվերջ շղթա է: Վերջերք ազատագրությունից հետո հրատարակվող բուլղարական թերթերը և այնտեղ տեսնելու եք մակեդոնացիների խեղճ վիճակը: Մակեդոնացիների երկիրը ողողված է արյամբ ու արցունքով: Եվ ամենաարգահատելին ու սրտակեղեքն այն է, որ երբ մակեդոնական բուլղարը դարձավ բռնակալի դեմ պայքարում իր մարդկային իրավունքների համար, գտնվում են եղբայր սլավոններ, որոնք նրանց վերքերի վրա աղ են ցանում: Նրանից հետո գալիս են թշվառ սերբերը, որոնք ոսկով փնտրում են ինչ որ սերբերի՝ ամենավայրի շովինիզմի ասպարեզում: Նրանք յուղ են քսում անգլուխ բռնակալի չոր հացին, և հնարավորություն տալիս նրան մորթելու, անպատվելու ու տանջելու մակեդոնացիներին: Վերջերս Մակեդոնիայում տեղի ունեցող թուրքական գազանությունները, խենթանալու աստիճան ուրախացրին սերբերին: Նրանք հրճվում են և ձեռքերը շփում, որ մակեդոնական բուլղարները ջախջախված են: Խեղճերը, որքան միամիտ են: Իսկ ռուսներին, ինչ ծանր մեղքեր ենք գործել, մենք, մակեդոնացիներս, որ մեծ Ռուսաստանը պաշտպանում է այլանդակ սերբական պրոպագանդան, որը մահացություն է տարածում ժողովուրդների մեջ: Ռուսական դիվանագիտությունը Արևելքում ծուռ ճանապարհ է ընտրել, որը դեպի բարին չի տանում: Ռուսական դիվանագետները մակեդոնացիների նկատմամբ իրենց ոչ եղբայրական վերաբերմունքով ի վերջո ստիպելու են վերջիններս համբերությունից դուրս գալու և ունիայի<sup>1</sup> գիրկը նետվելու: Եվ ամենավերջում, այնտեղ լինելու է մակեդոնացի բուլղարների փրկությունը: Բուլղարական կառավարության կողմից մի զգվելի

<sup>1</sup> Ունիա - կաթոլիկական միություն:

հալածանք, որը հովերի բերումով բյուզանդավարի իր ձեռքում է պահում բուլղար ժողովրդի ճակատագիրը, այլասերված սերբերի խարդավանքով, որը կաշառքի ու ոսկու միջոցով թունավորում են վերածնվող մակեդոնական բուլղարների կյանքը և ամենավերջում, նաև հալածանքները՝ ավանդական *քեռի Իվանի* դիվանագետների կողմից:



Մենք անձնապես հանդիպեցինք այն դժբախտներին, որոնք ձմռանը թողեցին իրենց տունն ու տեղը և անցնելով մի շարք լեռներով, եկան եղբայրական երկիր, մերկ, բոքիկ, հոգնաբեկ, կմախկացած: Նրանց տեսնես ու ողջ ու ողջ ողբաս: Որոշ չքավորներ խույս տվեցին թուրքական կոտորածներից, որպեսզի գան և բանտարկվեն բուլղարական կառավարության կողմից: Որքան զգվելի է այս ամենը:

Թուրք հաստագլուխ դիվանագետները, երևում է դրականապես երդվել են, չհասկանան ամենատարրական քաղաքական ճշմարտությունը, թե որտեղ առկա է բռնությունն ու դեսպոտիզմը, այնտեղ լինելու են և վրեժխնդրություն և կամ մեծ ու փոքր ապստամբություններ:

Մեր հայրենակից ու բարեկամ քեռի Շահովը, որը հանդիպել է Բուլղարիայի սահմանի ամբողջ գծի վրա գտնվող բոլոր տանջանքների հետ, մեզ հաղորդեց նորագույն տեղեկություններ թուրքական նախնիների մասին:

Ոչ ոք այլևս չի վիճարկում, որ թուրքական կայսրության մեջ ոչ ոքի երբեք չի եղել և չի կարող լինել երաշխավորություն ո՛չ կյանքի, ո՛չ պատվի, ո՛չ էլ ունեցվածքի: Դարեր շարունակ այս թագավորության մեջ ստրկացված քրիստոնյաները ապստամբվում են թուրքական բռնատիրության դեմ և մասառմաս, մեկը մյուսի հետևից ազատագրվում: Դա մի պատմություն

է, որը շարունակվելու է այսպես, մինչև որ ամենավերջում լրիվ տապալվի թուրքական կայսրությունն իր սուլթաններով և ամբողջ ահավոր բռնակալությամբ, որը հիմա էլ դեռ կատաղում է քրիստոնյաների վրա: Եվ Մակեդոնիայի քրիստոնյա բնակչությունը, որը չարված ու թալանված է թուրքերից, և ոչ թե պաշտպանված սուլթանական իշխանությունից, որին ենթակա է ծանր հարկերով, չի կարող հույս ունենալ, որ երբևիցե ուրախանալու է մարդկային խաղաղ կյանքով՝ սուլթանի հովանավորության տակ: Մի բարվոք կյանքի համար մտածող այս բնակչությունը, իր փրկությունը գտնում է սրբազան հեղափոխության մեջ, որը փրկեց մյուս բոլոր հարևաններին, և հանձն է առել լրջորեն նախապատրաստվել դրան: Սա ոչ ոքի գաղտնիք չէ: Դրան որպես սկիզբ ունենք Կրեսնայի ապստամբությունը, Բիթլիայի վիլայեթում 1881 թվականին ճնշված ապստամբությունը, 1885 և 1895 թվականների շարժումները: Եթե վերջին երկու տարիների ընթացքում այն չբռնկվի, այդ կարելի է բացատրել ռուսական դիվանագիտության՝ խաղաղ մնալու հաճախակի խորհուրդներով, միաժամանակ խոստանալով, որ Մակեդոնիայի քրիստոնյաների վիճակը բարելավվելու է, նույն իմաստով նաև բուլղար ղեկավարների հորդորները: Այդուհանդերձ, մակեդոնացիները ենթադրում են, որ այդ խոստումները կարող են մոռացվել, ուստի անդադար շարունակում են որքան կարելի է շուտ պատրաստվել մի արյունալի պայքարի:

Մի դժբախտ պատահականություն հիմա մատնում է նրան, և ահա բացահայտվում են զենքեր և ռումբեր:

Մի ավազակային հրոսախումբ, որպիսիք թուրքական կայսրության մեջ անընդհատ շատանում են, և որոնք քրիստոնյաների նկատմամբ կատարել են անհամար կոդոպուտներ ու սպանություններ, Վինիցայում սպանում են Քյազիմ բեյին և մորը, որից հետո թալանել են այդ թուրքի բնակարանը:

Վինիցայի թուրքական ոստիկանությունը, որը քաջություն չի ունեցել հալածելու և բռնելու ավազակների, որոնք գիշերը մի քանի ժամ եղել են Քյազիմ բեյի բնակարանում, ուր տեղի են ունեցել հրացանների երկար կրակոցներ, որ ոստիկանությունը չի համարձակվել գոնե ժամանակին օգնության հասնելու Քյազիմ բեյին: Բոլոր ոստիկաններն ու չաուշները թաքնվել են մկան ծակուռներում՝ վախից, դողդողալով յուրաքանչյուր կրակոցից: Առավոտյան, երբ համոզվել են, որ քաղաքում կան ավազակներ և սպանել ու թալանել են Քյազիմ բեյին, գազազած հարձակվել են քրիստոնյաների փողոցների վրա և բանտարկել բոլոր վինիցացիներին:

Տանջանքներն ու տառապանքները, որոնց ենթարկվել են Վինիցայի քրիստոնյա բնակիչները՝ սոսկալի են: Թուրքական իշխանությունները Վինիցայի խաղաղ բնակիչների մեջ փնտրել են ոչ թե ավազակների, այլ ինչ որ կոմիտաների: Ոմանք ծեծի են ենթարկվել մահացու կերպով, ուրիշներին կախել են ոտքերից, և այդ վիճակում պահել 5-10 ժամ: Ուրիշներին թաց կապկապած պարանով փաթաթել են գանգերի շուրջը՝ մինչև աչքերը դուրս թոնեն և մինչև գանգը տրաքվի, և այլն: Շատերն արդեն մահացել են: Այս և նման տանջանքների միջոցով թուրքերին հաջողվել է մի ոմն Իվան Պետրովից պոկել որոշ ցուցմունքներ, որոնց շնորհիվ Վինիցայում հայտնաբերվել են 25 ումբ և 70 հրացան, իսկ դրանից հետո գտել են նաև որոշ թղթակցություններ: Մի անգամ այս թուրքերը ձեռք բերելով հաջողություն, ավելի են գազազել և զինել են նաև բաշիբոզուկներին, որոնց ուղարկել են շրջակա գյուղերը զենք հայտնաբերելու: Ամեն ոք կարող է ենթադրել, թե բաշիբոզուկները ինչեր են կատարել այդ գյուղերում, ինչ բռնություններ, ինչ պատվազրկումներ և ինչ կողոպուտներ:

Թուրքական այս գազանություններն այնքան սոսկալի են եղել, որ շուրջ 250 հոգի, հիմա, ձմեռվա

կեսին, թողել են իրենց բնակարանները, կանանց ու երեխաների, անտառներով փախել են մեզ մոտ, չեն-թարկվելու համար այդ ծանր տանջանքներին:

Եվ երբ այս ամենը կատարվել է մեր աչքերի առջև, գտնվեցին նաև բուլղարներ, որոնք փորձեցին ծածկել թուրքական գազանությունները, և ժխտել կատարված փաստերը:

Մենք անձնապես գնացինք Քյուստենդիլ<sup>1</sup> և այնտեղ ամեն ինչ ստուգեցինք: Մինչև երեկ անցել էին 167 հոգի, որոնց մեջ կան քահանաներ, ուսուցիչներ և առևտրականներ: Նրանք տարբեր գյուղերից են: Մենք այստեղ հայտնում ենք միայն մի քանի փաստեր, որոնք տեղեկացանք ականատեսներից և հալածվածներից:

Վինիցայում ռումբեր ու գեներեր հայտնաբերելուց հետո, մոտակա Քըշլատա գյուղ են եկել թուրք զապտիկներ: Պաշարել են մի քանի տուն, բռնել են Միլենկո գյուղապետին, 55 տարեկան մի մարդ, ձեռքերը կապել են ետևում, և ծեծելով տարել են Վինիցա: Այնտեղ մի թաց հանգուցավոր պարանով կապել են գլուխը և սեղմել այնքան, մինչև աչքերը դուրս գան, և ծեծել են, որպեսզի հայտնի, թե գյուղում որտեղ են թաքնված գեները: Վերջում տեսնելով, որ ոչինչ չգիտի, կիսակենդանի բաց են թողել, հրամայելով, որ հավաքի բոլոր գյուղացիներին և բերի Վինիցա: Վախեցած սոսկալի տանջանքներից, Միլենկոն մի քանի համագյուղացիների հետ փախել է գյուղից: Հիմա Միլենկոն Քյուստենդիլում է, և դեռ գլխի վրա երևում են պարանի հետքերը: Նա ասաց, որ իր աչքերով տեսել է, թե ինչպես քահանա Իլիայի ձեռքերի մատների արանքներում խրել են եղևնու փայտիկներ և վառել, ինչպես նաև ոմանց կախել են ոտքերից, իսկ ոմանց կեսից, քթներն ու բերանները փակելով սեղմիչներով, ինչպես

---

<sup>1</sup> Քյուստենդիլ – քաղաք արևմտյան Բուլղարիայում, արևելյան Մակեդոնիայի հարևանությամբ:

ծիերին, որոնցից կախել են քարով լիքը տուպրակներ: Իսկ ուրիշներին, առանձին առանձին, հանել են բանտերից և հանձնել զապտիեներին, որոնց մահացու ծեծել են ու հետո նորից բանտ նետել: Մյուս օրը շատերին գտել են մահացած:

Օրիգարցի գյուղում գանակոծված գյուղացիներից երեքը մահացել են:

Վրանյանցի գյուղում ձերբակալվածներից մեկին կտրել են ականջները:

Պոլակի գյուղում, ուր 180 տուն մարդ կա, բոլոր գյուղացիներին մահու աստիճան ծեծել են:

Բալի գյուղի գյուղացիների ոտքերը խցկել են վառարանի մեջ, որպեսզի վառվեն, մինչև որ ցավերից մահանան:

Շտիպցի առևտրական Պետր Սուխտարովին թուրքերը բռնել են Քոչանի շուկայում, կապել են ձիու պոչից, և այդպես տարել են Վինիցա, որտեղ մահացել է:

Ձերբակալվածների մեջ կան նաև կանայք, աղջիկներ ու երեխաներ: Դրանցից շատերը բռնաբարված են: Քոչանում, Պոլյանիչկոյում և Մալաշևսկոյում ամեն ինչ թալանված ու ոչնչացված է:

Վինիցան այն վայրն է, որտեղ հիմա տեղի են ունենում հայտնաբերվածների գործերի քննությունը: Խե ինչ է կատարվում Շտիպում ոչ ոք ոչինչ չգիտի: Ասում են, որ այդ քաղաքը պաշարված է: Սակայն թուրքերը, ինչպես երևում է, չեն բավարարվելու միայն այս շրջաններով, քանզի ամեն օր նոր փախստականներ են հասնում, միշտ տարբեր, և Քոչանից ավելի հեռու գյուղերից:

Եթե բուլղարական իշխանությունը անտարբեր մնա բուլղարական Սակեդոնիայի ոչնչացմանը, թուրքերը շարունակելու են իրենց վայրագությունները և նրանց հաջողվելու է խեղդելու այն ամենը, ինչ Սակեդոնիայում բուլղարական է, որը հետագայում բացասաբար է անդրադառնալու այժմյան բուլղարական իշ-

խանութիւնների վրա: Եթե սերբերը ուզում են Մակեդոնիայում արվեստականորեն սերբեր ստեղծել, ազատ բուլղարները պարտավոր են թույլ չտալ Մակեդոնիայում ապրող իրենց եղբայրների ոչնչացումը: Բուլղարական կառավարութիւնը, որի ձեռքում է մեր իշխանութեան ճակատագիրը, թելադրում է հայրենասիրական պարտք սուլթանին հղելու նպատակամղված դիմումներ, որպեսզի դադարեցվեն թուրքական վայրագութիւնները Մակեդոնիայում և այնտեղ իրագործվեն խոստացված բարենորոգումները, որոնք թեթևացնեն տանջված բնակչութեան վիճակը:

Մինչև հիմա, որքան թուրքիայում իշխում է անարխիան, և քանի որ այնտեղ իշխանութիւն գոյութիւն չունի, որը պահպանի բնակչութեան կյանքը, պատիվն և ունեցվածքը, ապստամբութեան միտքը չէ և չի կարելի համարել հանցագործութիւն այդպիսի պետութեան դեմ, իսկ այն իշխանութիւնը, որը չի հոգում թուրքական աշխատասեր հպատակների բարեկեցութիւնը, իրավունք չունի ոչ ոքի հալածելու ըմբոստութեան համար:

Իսկ Սոֆիայում մակեդոնական գերագույն կոմիտեն, թուրքական կոմիսարի ժխտման համաձայն, որ Մակեդոնիայում թուրքական գազանութիւններ չեն եղել, հրապարակել է հետևյալը:

Հայտնի չէ, թե ինչի հիման վրա սուլթանի թուրքական կոմիսարիատը կարողացել է անտեսել Բուլղարիայի հասարակական կարծիքը: Մյն բանի համար, որ նրա սուլթանը մի Գլադստոնի կողմից ճանաչվել է իբրև մարդասպան և կամ նրա՞ համար, որ բուլղարական պատմութեան մեջ նշված է մի Բատակ<sup>1</sup>: Այս կոմիսարութիւնը «Միր» լրագրի 469-րդ համարում

---

<sup>1</sup> Բատակը Բուլղարիայի այն քաղաքներից էր, որը օսմանյան բռնակալութեան դեմ 1876 թվականին բարձրացրած ապստամբութեան ժամանակ թուրք բաշիբոզուկների կողմից նրա բնակչութիւնը կոտորվեց իսկ քաղաքը հրկիզվեց ու թալանվեց:



հրատարակեց մի «պաշտոնական հեռագիր», որը գալիս է ժխտելու թուրքական իշխանությունների գործադրած բարբարոսությունները Բրեզալնիցայի հովտում բուլղարական բնակչության նկատմամբ, որովհետև այդ քրիստոնյա բնակչությունը ծանր մեղք է գործել խաղաղ ապրելով և հույսը դնելով 1895 թվականին արված սուլթանական խոստումների, և ռուսական հորդորների և բուլղարական կառավարության հավաստումների վրա, թե՛ նրա համար ևս գալու են արդարության և խաղաղության օրեր:

Այո, բացահայտված են զենքեր ու հրացաններ, նաև դինամիտ և ռումբեր, և նույնպես «դեռ ուրիշ զենքեր» և էլի կան, որ պիտի հայտնաբերվեն, և «դրանք *թաքցնողները ռազմական (թուրքական) դատարանի օրենքի համաձայն պիտի պատժվեն*», պիտի զանակոծվեն, մորթվեն, ցարդվեն և կախաղան բարձրացվեն: Այս մասին պատմվում է թուրքական կոմիսարիատի ժխտման մեջ: Եվ այս ամենից հետո, մենք ևս կարող ենք ավելացնել, որ պետության համար հասնելու են խաղաղության և անդորրության օրեր և սուլթան Համիդի համար բարեկեցիկ ու երկար տարիներ...:

Մեր ցանկությունն է նվազագույնս չառարկել սուլթանական պաշտոնյաների բանականությանը, ոչ էլ վիճարկել նման ասիական հայեցակետի արդարությունը: Մեր նպատակն է մի հակիրճ լուսաբանություն տալ այն արյունոտ ներկայացման առթիվ, որը մի քանի օրից ի վեր փչրում է բուլղարացու սիրտը, և բուլղարի մեջ ազատասիրական զգացմունքներ է արթնացնում՝ դարավոր բռնատիրության դեմ պայքարելու համար:

Սհա թե որն է գործի էությունը:

Թուրքական կառավարությունը Տեսալիայում իր միսիան ավարտելուց հետո, հանձնառու եղավ ավելի մեծ բարեխղճությամբ և ավելի զգոնությամբ ոչնչացնելու այն ամենը, ինչը կասկածի էր ենթարկվում, թե օրերից մի օր միջնորդելու է հասնելու համար ա-

զատության և արդարության մասին նրա մշտնջենական խոստումների իրականացմանը: Ում որ ասեղ է պետք, կգտնվի նաև մատնոց: Այսպես է նաև այստեղ:

Մի ավազակային հրոսախումբ, բաղկացած ամենից նվաստ տարրերից, անցյալ նոյեմբեր ամսի 13-ից մինչև 14-ը, գիշերվա ժամը 9-ին, մտնում է Վինիցա գյուղը, սոսկ թալանի նպատակով, սպանում է գիշերային պահակներին, ծնունդով բուլղար, և մի թուրք: Թուրքական իշխանությունները փոխանակ ավազակներին բռնելու, պաշարում են ամբողջ գյուղը և ամբողջ վեց օր ծեծում, տանջում են 15-ից մինչև 70 տարեկան բոլոր բուլղար գյուղացիներին, մինչև որ ծանր տառապանքների և սարսափելի տանջանքներից հետո, գյուղապետ Իվան Պետրովը, 60 տարեկանից ավելի մի մարդ, ասել է, որ գյուղում գենք կա: Թուրքական իշխանություններին էլ այդ էր պետք, ինքը ավազակ, նրան ավազակներին բուլորովին չեն հետաքրքրում: Նրա համար կարևոր է, և արտակարգորեն կարևոր, որպեսզի քրիստոնյա բնակչությունն անընդհատ վախուղողի մեջ պահվի, որի համար հնարում են հազարավոր առիթներ: Հայտնաբերված գեները նշանակում են, որ բուլղար գյուղացին անպայման ապստամբ է, չնայած հարևան մուսուլման բնակչությունը մինչև ատամները զինված է: Այդ հայտնագործությունից հետո, գործին տրվում է ցանկացած բնույթ: Ոգևորությունն ու թալանը շարունակվում է, ձերբակալություններն ու տանջանքները հասնում են ամենալայն չափերի: Հրոսախումբը, որի փողի ընչաքաղցությանը զոհ դարձան գիշերային պահակ Գեորգի Յվետկովը և Քյազիմ բեյը, դադարեցվեց հետապնդվելուց: Բայց թե թուրք իշխանությունները ինչի համար հալածի ավազակներին, մարդասպաններին, երբ նրանք իրենց գործընկերներն են, երբ նրանց լավ առիթ է ներկայանում թալանելու, անպատվելու, սպանելու, համբերատար քրիստոնյա բնակչությանը ոչնչացնելու համար: Այս ասպարեզում թուրքական իշխանությունների


զագանությունները միայն մասամբ հայտնի են մեզ: Առայժմ ահա թե ինչ գիտենք այդ մասին:

Թուրքական ոստիկանությունը համալրված զորքով ու բաշիրոզուկներով, Քոչանից, Մալաշևսկոյից և Պիյանիչկոյից այնպիսի վայնասուն է բարձրացրել, որ այսօր, չնայած խտացված թուրքական սահմանային պահակային զորքերին մեզ մոտ են հասել 250 գաղթականներ, գյուղական քահանաներ, ժողովրդական ուսուցիչներ, 60-70 տարեկան հասակի ծերունիներ, տատիկներ ու փոքրիկ երեխաներ, մայրեր էլ կան, որոնք թողել են իրենց հարազատներին ու փախել: Գաղթականների մեծ մասը իրենց վրա կրում են թուրքական բարբարոսությունների հետքերը: Սեխանիկական միջոցով հանգուցավոր թաց պարանով սեղմված գանգերով, մարդկային դիակներով կախված հաշմված ձեռքերով, ասեղով ծակծկված ոտքերով, այրված կուրծքերով կանայք, ջարդված կողոսկրներով, և այլն, և այլն: Նման նշաններով գաղթականներ հասել են նաև մեր մայրաքաղաքը:

Վինիցա գյուղում երթիկներից՝ ձեռքերից և ոտքերից մեխած կախված են եղել 70-80 հոգիանոց շարքերով, և ժամերով այդ վիճակում պահված են եղել: Ջախարիա Ցեկովը կախված է եղել երթիկից և այդպես մնացել ամբողջ երեք օր, որից հետո մահացել է: Նույն գյուղում թուրքական հազարապետի անձնական հրամանով միանգամից գանակոծվել են 20-30 հոգուց բաղկացած խմբերով գյուղացիներ, որի զոհն են դարձել Չրիստո Լեկովը, Սիմո Սամարջիևը, Սիտո Բոյաջիյսկին և ուրիշներ: Ջրրնովցի գյուղի քահանայի քիթը սեղմել են ձիու սեղմիչով, որից կախված է եղել ծանրություն: Քահանան կախված է եղել երդիկից, իսկ բանտում շամփրել են շիկացած երկաթով, որի հետևանքով մահացել է: Իսկ Վինիցա գյուղի Իլիյա քահանայի կապված ձեռքերին ու կրծքին մազուք են քսել, հետո վառել են որից քահանան այրվել է, և այլն, և այլն:

Այսպես սկսվեցին կիրառվել սուլթանի խոստացած բարենորոգումները: Այսպիսին են ռուսական դիվանագիտության խաղաղասիրական հորդորների հետևանքները, այդպիսին է բուլղարի՝ հանգիստ մնալու պարզևր՝ Թուրքիայի հետ վերջին պատերազմի կրիտիկական օրերին: Սուլթանը խոստանում է, Ռուսաստանը հորդորում է, բուլղարական կառավարությունը համոզում է, և թուրքերի քրիստոնյա բնակչությունը փոխանակ շարունակի 1895-ին սկսած պայքարը, թողեց իր զենքը, և սկսեց ցանել, հենվելով օրերից մի օր բարվոք, բախտավոր կյանքով ապրելու հույսին...:

Մենք չգիտենք, թե ինչ է մտածում Ռուսաստանը, ինչ կարող է մտածել Ազատ Բուլղարիայի կառավարությունը, սակայն այս ամեն ինչից հետո, մենք շատ լավ գիտենք, որ սուլթանն ուզում է Մակեդոնիայից ստեղծել երկրորդ Հայաստան, և մեզ՝ Մակեդոնիայի քրիստոնյաների համար այսուհետև բոլոր կեղծ խորհուրդները, բոլոր ազգային խաբեություններն ու եղբայրական հավաստումները դատարկ խոսքեր են, և մեր ծրագիրը, ազատ ամեն մի պարտավորությունից, բոլորիս ձայնը դառնալու է բոլոր ուղղություններով և բոլոր միջոցներով թուրքական բռնակալության դեմ պայքարելու միասնական ձայն...



**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԵՐԻ  
ՄԱՍԻՆ ԱՍՈՒՄ Է.**

Թուրքի հետ բարեկամություն չի լինի:

Թուրքի բարեկամությունը ծնկի վրա է:

Շունն անգամ թուրքի հետ պարկը չի մտնի:

Թուրքը հավատք չունի:

Թուրքի ղեկավարելը՝ խոզի խառնաժողով է:

Թուրքը որտեղ ոտք դնի, այնտեղ կանաչ չի բուսնի:

Հարբած թուրքը հիմար է, ինչպես հարյուր խոզ միասին:

Թուրքը նման է շան, որը վախեցավ թե՛ չէ պոչը կծկում է, ծղրտում է ու փախչում, իսկ որ կատաղեց՝ մարդուն հալածում է մինչև յոթը պորտը:

Թուրքը արդարություն չգիտի, բացի ալ-ղուրանից:

Թուրքի արդարությունը կացնի մեջ է:

Թուրքը երբ խմում է, խմում է տասը բուլղարի տեղ:

Երբ թուրքը խմում է, սատանան ուրախանում է, իսկ Սուհամեղը միրուքը փետում:

Հարբած թուրքը զոռում է իշու նման, իսկ մաղադանոս է ուտում՝ հարեմականները հոտը չառնելու համար:

Տեղավորվել է թուրքի պես, երբ արտաքնոց է գնում նոր իբրիկով<sup>1</sup>:

Աստված պահի քեզ՝ հարբեցողությունից հետո մախմուր թուրքի հանդիպելուց:

Հարբած թուրքը և... զնչուն:

Թուրքի մտածմունքը միշտ էլ չարի և նամազի<sup>2</sup> մասին է:

Թուրքը որ գազազեց խոտ է արածում, ինչպես կատաղած շունը:

Թուրքը որ խժռեց նոր ուսմունքը, միայն նրա համար է, որպեսզի խոզի ճարպ ուտի և օղի լակի խենթի պես:

Երեք թուրք որ միասին խմում են, ինացիր որ կարկուտ է խփելու:

Ով չի փորձել թուրքի վարքն ու բարքը և բռնությունը, նա աշխարհից ոչինչ չի հասկանում:

Թուրքը և աքլորը պարում են երբ հարբում են:

Թուրքը փափկում է ք...ի պես, երբ փախչում է կազակների առջևից:

Թուրքը կանանց փոխում է, ինչպես բուլղարն իր ծիերին:

Եթե անցնես թուրքի պետական աղբյուրի մոտից, չի-

<sup>1</sup> Իբրիկ – սափոր՝ լվացումի համար:

<sup>2</sup> Նամազ – թուրքի աղոթելու արարողությունը:

նի որ քրից խմես:

Թթված՝ թուրքի նման:

Աֆիոն խմած թուրքը կծում է շան պես:

Թուրքը արագավազ շան համար կնոջն էլ է ծախում:

Ձուգվել, զարդարվել է նոր չիբուխով և չալմայով թուրքի նման:

Որտեղ թուրքը հրամայում է, այնտեղ մինարեթները շատանում են:

Շուկայում թուրքն անկարգ է:

Աստված չանի՝ մերկ թուրքի կերակրես:

Թուրքը լպշտում է մորթվածի պես:

Հարուստ թուրքը հարեմ է հավաքում (բազմակին դառնալու համար):

*Դ. Ա. Ապիրով*